

ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

Գինը 100 դրամ:

ԶՈՐԵՇԵՆԱԳՐԻ
28 ՄԱՐՏԻ 2012Թ

№ 6 (247)

www.syuniacyerkir.am

Եվ երկրում գեղընաքարը,
Խեմ,
Յողուններ են շրշում
անդեմ...

ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՏ



Կապան, «Ջանգեզուր» փերմինալ, 14 մարտի 2012թ.

Ընտրական մարաթոնի մասնակիցները Սյունիքից

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՐԳ

Սյունիքի մարզն ընդգրկում է N37 և N38 ընտրատարածքները: Առաջինը ներառում է Գորիսի և Սիսիանի, երկրորդը՝ Կապանի և Մեղրու նախկին շրջանները: Վերջերս ընտրատարածքների սահմանների վերանայման արդյունքում այդ ընտրատարածքների սահմանները փոփոխության չեն ենթարկվել: N37 ընտրատարածքի ընտրողների նախնական թիվը 54766 է, N38 ընտրատարածքի ընտրողների թիվը՝ 50387:

N37-ում ոչ սպանդարտ իրավիճակ է

Գորիսի և Սիսիանի շրջաններն ընդգրկող այդ ընտրատարածքում առաջադրված վեց թեկնածուից չորսը գորիսեցի է՝ Հայկ Գրիգորյան, Վարազդատ Վարդազարյան, Սամվել Հարությունյան, Մալիկ Թելունց: Դա նշանակում է, որ Գորիսում՝ վերջին 20 տարվա կտրվածքով, աննախադեպ մրցապայքար է սպասվում: Եվ, ըստ էության, պայքար կմղվի ամեն մի ծայրի համար:

Հայկ Գրիգորյանը, ով ՀՀԿ թեկնածուն է, հավանաբար (դատելով տարիների փորձից) կստանա ոչ միայն այդ կուսակցության, այլև իշխանական օղակների և բյուջետային հիմնարկների ու կրթական հաստատությունների աջակցությունը: Նա 1984թ. ծնված է, ավարտել է Գորիսի պետական սարսափ մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը, մինչև ս.թ. հունվարի 1-ն ուսուցչություն է արել Գորիսի N4 ավագ դպրոցում, ծառայել է հայոց ազգային բանակում: Հայկ Գրիգորյանն առաջադրվել է նաև ՀՀԿ համամասնական ցուցակով և զբաղեցնում է 185-րդ հորիզոնականը:

Սամվել Հարությունյանը, ով 1990-ից սկսած միշտ էլ առաջադրվել է պատգամավորության թեկնածու, այս անգամ եւս ինքնաառաջադրվել է: Եղել է ԽՍՀՄ շարքերում, ՀՀԿ-ի կազմում, ՀՀԿ-ում, ՀԱԿ-ում, հիմա անկուսակցական է և չի աշխատում ու զբաղվում է հասարակական-քաղաքական գործունեությամբ: Ծնվել է 1954թ. Գորիս քաղաքում, 1976-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետը: 1989-90թթ. եղել է Գորիսի շրջխորհրդի գործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ, 1991-92թթ.՝ Գորիսի N6 միջն. դպրոցի տնօրեն, 1992-94թթ.՝ Գորիսի քաղաքի ընտրողների նախագահ: Ս.Հարությունյանի ընտրազանգվածի միջուկն ավանդաբար կազմել են իշխանությունների քաղաքականությունից դժգոհ խավերը: Այս անգամ, սակայն, այդ ընտրազանգվածը կբաժանվի մի քանի մասի:

Գորիս քաղաքում որոշակի ճանաչում ունի առաջադրված մյուս թեկնածուն՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարազդատ Վարդազարյանը: Ծնվել է 1951թ. Գորիս քաղաքում: Երկար տարիներ աշխատել է Երևանի Խ.Աբովյանի համալսարանում:

Շարունակությունը՝ էջ 6

Բեռնափոխադրումների ուղորդը՝ կանոնակարգման հրամայականի առջեւ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների մտահոգություններին մեր թերթը մի քանի անգամ անդրադարձել է: Ըստ էության բեռնափոխադրումների ուղորդը լուրջ կանոնակարգման հրամայական պահանջ ունի: Մարտի 14-ին ժամը 10-ին խմբագրությունում ահագնազ ստացանք, որ «Ջանգեզուր» տերմինալում «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության համար բեռներ (սելիտրա) տե-

ղափոխող երեք տասնյակից ավելի մեքենաներ մարտի 6-ից «լուվել»-մնացել են, իսկ թե ինչու՝ որոշեցինք պարզել տեղում:

Տերմինալի տարածք ոչ ոք չի սոցընդոտեց մուտք գործել, բայց հետո, երբ սկսեցինք լսել վարորդների զանգատները, երեւաց մի երիտասարդ, ով չներկայացավ, բայց նաև ասաց, որ ինքն է տարածքի ղեկավարը և թերթի աշխատակիցներիցս պահանջեց ավելի հարմար տեղում, նույն է որ տերմինալից դուրս, գրուցել վարորդների հետ: Ինչու, մենք շարունակեցինք

մեր գործը, նա էլ հեռվից ականատես էր լինում մեր գրուցիցին:

«Մեր փողերը տալիս ենք մաքսակետին և տերմինալին և պատահում է՝ ամսվա վերջին էլ տույժ ու տուգանք ենք վճարում», - տրտմացին մեր գրուցակիցները և ասացին, որ այդ ամենից հետո երբեմն՝ տակը ոչինչ չի մնում, մենք էլ փորձեցինք նախեսառաջ ճշտել, թե վարորդներն ինչ գումարներ են վճարում և ինչի համար: Եվ այսպես, ավտոտրանսպորտային գործունեություն

Շարունակությունը՝ էջ 3

Սյունիքի մարզը և կուսակցությունների (դաշինքների) նախընտրական ցուցակները

Մայիսի 6-ի ընտրություններին կմասնակցեն ութ կուսակցություն և մեկ դաշինք: Ովքե՞ր են Սյունիքից ընդգրկվել քաղաքական այդ ուժերի նախընտրական ցուցակներում:

ԱՈՒՆՑ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Տեւական լուրջությունից հետո Աժ ընտրություններին մասնակցող Հայաստանի կոմունիստական կուսակցությունն իր ցուցակում ընդգրկել է ՀԿԿ Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար Մարտին Մայսուրյանին (22-րդ տեղ), ՀԿԿ Կապանի շրջկոմի 2-րդ քարտուղար Համլետ Հայրապետյանին (68-րդ տեղ) և ՀԿԿ Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղար Գառնիկ Կարապետյանին (13-րդ տեղ):

Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախընտրական ցուցակում Սյունիքի մարզից ոչ ոք չի ընդգրկվել:

«Միավորված հայեր» կուսակցության նախընտրական ցուցակի 18-րդ տեղում Մարգարիտա Օհանյանն է (Ագարակի ՊՄԿ-ի գործավարուհի):

«ժառանգություն» կուսակցության 44-րդ հորիզոնականում է Ռադիկ Հովհաննիսյանը՝ Սիսիանից, չի աշխատում:

ՀԱԿ-ի ցուցակի 17-րդ տեղում Դավիթ Մաթեոսյանն է՝ «Բյուր-Հաշ» ՍՊԸ տնօրեն, ով առաջադրվել է նաև մեծամասնական ընտրակարգով (N38 ընտրատարածք): ՀԱԿ-ի ցուցակի 43-րդ տեղում է Վարազդատ Վարդազարյանը՝ անկուսակցական, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վա-



ՀՀ Ազգային ժողովի շենքը:

րիչ, ով N37 ընտրատարածքում առաջադրվել է նաև մեծամասնական ընտրակարգով: ՀԱԿ-ի ցուցակը եզրափակում է Գրիգոր Հարությունյանը՝ Մեղրուց:

ԲՀԿ-ի նախընտրական ցուցակի 30-րդ հորիզոնականում Մերուժան Սիմոնյանն է՝ Կապանից, չի աշխատում: Այդ կուսակցության

Շարունակությունը՝ էջ 2

ՏԻԳՐԱՆ ՅԵՔԵՔՅԱՆ. «Աստղերը փայլապահում են մթության մեջ, արեւի լույսով՝ անհետանում»

«Այունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախմբի ղեկավար եւ դիրիժոր Տիգրան Յեքեքյանը

«Հայաստանի փոքրիկ երգիչներ»

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը ստեղծվել է 1992 թ.: Երգչախմբի հիմնադիրը Տիգրան Յեքեքյանն է, ով շուրջ 20 տարի ղեկավարել է նաեւ Հայաստանի ռադիոյի կամերային երգչախումբը: «Հիշում եմ այն օրերը, երբ ռադիոյի երգչախմբի հետ ճապոնիայից հաղթանակած վերադարձանք Հայաստան, շատ տխուր վիճակ էր տիրում երկրում: Որոշեցի գոնե ինչ-որ զբաղմունք գտնել հայ երեխաների համար, որի միջոցով նրանք կկտրվեին առօրյայից, գոնե երգով կզբաղվեին, քանի որ պատերազմի օրերին դպրոցները կանոնավոր չէին գործում: Ապա արդեն՝ երկու տարվա համառ աշխատանքի շնորհիվ, երգչախումբը դուրս եկավ միջազգային ասպարեզ», - ասաց Տ. Յեքեքյանը: Այնուհետ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը շրջագայեց տարբեր երկրներում, մասնակցեց ամենատարբեր միջազգային մրցույթների, փառատոների, սիրվեց եւ ճանաչվեց ոչ միայն հայ, այլեւ օտարերկրյա հանդիսա-



Շարունակությունը՝ էջ 4

Չարենցն այլ վերաբերմունքի էր արժանի



Մարտի 13-ին լրացավ Չարենցի ծննդյան 115 եւ պոետական գործունեության 100-ամյակը (անդրանիկ բանաստեղծությունը՝ «Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին» գրել է 1912 թվականին): Հանձնարել բանաստեղծ ու պոետիայի մեջ նորարար լինելուց զատ՝ նա նաեւ իր երկրի նվիրյալ քաղաքացին էր եւ հայրենասեր մարդ: Թվում էր օրվան պատշաճող մակարդակով կնշվեին երկու հոբելյանները, փորձ կարվեր եւս մեկ անգամ արժեւորել նրա գրական վաստակը՝ գնահատանքի խոսքերով, լրագրային հոդվածներով ու հեռուստահաղորդումներով: Ավաղ, համարյա անկատ անցավ հիշարժան այդ օրը: Մարտի 13-ին Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում մի քանի սերիալ կարելի էր դիտել: Գոնե լավ էր, որ «Հարցազրույց» հաղորդման հյուրերն էին բանասիրական գիտությունների դոկտոր, չարենցագետ Դավիթ Գասպարյանը եւ բանաստեղծի թոռը: Մյուսների եթերում եւս «Չարենց-115» խորագրին չէիր հանդիպի, դարձյալ սերիալների առատություն: Իսկ մեր ազգի մեծի մասին մի կարգին ֆիլմ էլ չի նկարահանվել: Մամուլում նույնպես տխուր էր վիճա-

կը: Հայաստանի գրողների միության շաբաթաթերթ «Գրական թերթում» «Եղիշե Չարենց - 115» խորագրի ներքո միայն մի բանաստեղծություն էր: «Իրավունք» թերթում կարճառոտ մի խոսք կար եւ հատված «Դաշնակցականներին» բանաստեղծությունից: Բանաստեղծությունն ամբողջապես խորհուրդ են տալիս կարդալ թերթի կայք-էջում: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթն էլ հոբելյանին անդրադարձավ մարտի 14-ի համարում, այն էլ նախորդ օրը տեղի ունեցած միջոցառումների արձագանքն էր (համրապետության նախագահն այցելել էր Չարենցի տուն-թանգարան, գրառում կատարել պատվավոր հյուրերի մատյանում, արարողություններ՝ բանաստեղծի տուն-թանգարանում եւ Ե. Չարենցի հուշարձանի մոտ): Մյուս թերթերն էլ Չարենցի կյանքին ու գործին նվիրված հրապարակումներով աչքի չընկան, եթե չասենք դրանք բացակայում էին: Այնուամենայնիվ, մշակութային որոշ օջախներում փորձեցին ոգեկոչել բանաստեղծի հիշատակը: Կապանի Շինարարների թաղամասի ակունք-գրադարանում բանաստեղծի 115-ամյակին նվիրված միջոցառումը «Դեպի վառվող ապագան» խորագրին էր կրում: Գրադարանավարուհիներ Էլիզա Եփրեմյանը եւ Էդիտա Կեխոյանը ներկայացրին բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունը, որոնք ուղեկցվում էին երաժշտական կատարումներով եւ ասմունքով: Գրադարանի դպրոցական ընթերցողները կարդացին պոետի բանաստեղծությունները եւ հատվածներ պոեմներից: Եվս մեկ անգամ բարձրաձայնվեց «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» չարենցյան պատգամը, որն այժմեական է նաեւ մեր օրերում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունիքի մարզը եւ կուսակցությունների (դաշինքների) նախընտրական ցուցակները

Սկիզբը՝ էջ 1

ցուցակի 125-րդ տեղում Կամո Աբրահամյանն է՝ «ԱԳԿ-սերվիս» ՄՊԸ տնօրեն (կուսակցության Կապանի կառույցի ղեկավար): Կարճեւանի գյուղապետ Արմեն Ավետիսյանը, ով կուսակցության Մեղրու կառույցի ղեկավարն է, ցուցակի 129-րդ տեղում է: Սիւնիանի «Հովթեր» ՄՊԸ-ի տնօրեն Կարեն Համբարձումյանը ԲՀԿ-ի ցուցակի 162-րդ տեղում է: ՀՀԿ-ի նախընտրական ցուցակի 60-րդ տեղում է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, 121-րդ տեղում՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Ծաղիկ Վարդանյանը, 140-րդ տեղում՝ «Դավիթբեկյան ուխտեր» ՀՀԿ-ի նախագահ, Սյունիքի մարզպետարանի աշխատակից Ռուդոլֆ Սարգսյանը, 185-րդ տեղում՝ Հայկ Գրիգորյանը, ով N37 ընտրատարածքում առաջադրվել է նաեւ մեծամասնական ընտրակարգով, 187-րդ տեղում՝ Վահե Հակոբյանը, ով N38 ընտրատարածքում առաջադրվել է նաեւ մեծամասնական ընտրակարգով, 203-րդ տեղում՝ Սասուն հաշատրյանը՝ «Ռոտանի հեկերի համալիր» ՓԲԸ տնօրեն, 249-րդ տեղում՝ Սիսիանի N3 ավագ դպրոցի տնօրեն Նաիրա Ներսիսյանը: ՀՀԿ նախընտրական ցուցակում են՝ 14-րդ տեղում՝ Գագիկ Գեւորգյանը (Կապանից, ԱԺ պատգամավոր, N38 ընտրատար-

ածքում առաջադրվել է նաեւ մեծամասնական ընտրակարգով), 19-րդ տեղում՝ Վարդան Ալեքսանյանը (Սիսիանից, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետի ղեկավար), 63-րդ տեղում՝ Անայա Ալեքսանյանը (Սիսիանից, չի աշխատում), 69-րդ տեղում՝ Արամ Բաբայանը (Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից, այդ գյուղի միջն. դպրոցի ուսուցիչ), 79-րդ տեղում՝ Ռոմիկ Ավանեսյանը (Կապանի շրջանի Նորաշենի կի համայնքի ղեկավար), 81-րդ տեղում՝ Ռոմիկ Համբարձումյանը (Մեղրուց, չի աշխատում): Հինգ հոգի տեղ են գտել «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական ցուցակում: 22-րդ տեղում՝ Գարիկ Միրզոյան (Կապան, չի աշխատում), 124-րդ տեղում՝ Ավարդ Դավթյան (Գորիսի շրջանի գ. Հարժիս, «Հայաստանի Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Գորիսի մասնաճյուղի տնօրեն), 160-րդ տեղում՝ Կամո Սարգսյան (Սիսիանի շրջանի գ. Շաղատ, «Անասարուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ, Սյունիքի մարզի մասնաճյուղի տնօրեն), 169-րդ տեղում՝ Սերի Դոնյան (Կապան, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Կապանի մասնաճյուղի լաբորանտ), 176-րդ տեղում՝ Հակոբ Թոնույան (Քաջարան, «Հ.Թոնույան» ՄՊԸ տնօրեն):

Լուրեր

«Հրակարսիմ» ՄՊԸ-ն (տնօրեն՝ Վարուժան Սիմոնյան) 2010թ. նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրի համաձայն վերանորոգում է Քաջարան գյուղի Սբ Հակոբ եկեղեցին: Անցած մեկուկես տարում կատարվել է մոտ 12 մլն դրամի աշխատանք: Վերանորոգման գործընթացը շարունակվում է: Ռեստավրացիոն աշխատանքը կատարվում է ՀՀ մշակույթի նախարարության կողմից հաստատված նախագծով: Ըստ պայմանագրի՝ աշխատանքները կավարտվեն 2012թ. դեկտեմբերին: Վերանորոգման նախագծային արժեքը 37 մլն դրամ է:

2009թ. Քաջարան գյուղի բնակիչները նախաձեռնեցին գյուղի Սբ Հակոբ եկեղեցու վերանորոգումը: Եվ այդ նպատակով սկսվեց դրամահավաք, բազմեց բանկային հաշիվ: Ըստ նախաձեռնող խմբի ղեկավար Մերուժան Աթայանի՝ անցած ժամանակաշրջանում հավաքվել է 32 մլն դրամ (այդ թվում՝ 80 համագյուղացուց՝ մոտ 8 մլն դրամ, «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ից՝ 20 մլն դրամ, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանից՝ 4 մլն դրամ): Հավաքված միջոցներից 2.5 մլն դրամը ծախսվել է եկեղեցու վերանորոգման նախագծային աշխատանքների համար, «Հրակարսիմ» ՄՊԸ-ին (եկեղեցին վերանորոգող ընկերությունն է) փոխանցվել է 5 մլն դրամ, ձեռք է բերվել անհրաժեշտ շինանյութեր մոտ 11.5 մլն դրամի չափով: Բանկային մնացորդը ս.թ. մարտի 25-ի դրությամբ կազմում է 13 մլն դրամ:

Մարտի 15-ի երեկոյան Կապանի «Պրինց» ռեստորանում տեղի է ունեցել ծեծկռուտը: Այդ մասին ոստիկանությունն օրեր շարունակ պաշտոնական հաղորդագրություն չի տարածել, թեև դեպքի վայր էր ժամանել ոստիկանության օպերատիվ քննչական խումբը: Մինչդեռ լրատվամիջոցները տեղի ունեցածի վերաբերյալ տարբեր վարկածներ են առաջ քաշել: Հակասական են տեղեկությունները դեպքի վայրում հնչած կրակոցի, միջադեպին մասնակցած անձանց եւ միջադեպին հաջորդած իրադարձությունների մասին: Աժ պատգամավոր Գագիկ Գեւորգյանը, ով ներկա է գտնվել միջադեպին, հաստատել է ծեծկռուտի մասին տեղեկությունը: Նա միաժամանակ հեքեքել է վարկածը, որ միջադեպն ունեցել է քաղաքական եմբատեքստ: Ըստ պատգամավորի՝ «Ուղղակի մի քիչ խմել են, իրար չեն հասկացել, թյուրիմացություն է եղել...»:

Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի որոշմամբ Ռուզան Ավանեսյանը նշանակվել է «Կապանի մանկապատանեկան կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն: Մինչ այդ Ռ.Ավանեսյանն աշխատում էր քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի առաջատար մասնագետ եւ կորդինացիոն էր երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների աշխատանքները: Ինչպես հայտնեց նորանշանակ տնօրենը, կենտրոնում տասնմեկ մասնագիտության գծով ուսանում է մոտ 250 երեխա, եւ հավելեց, որ կենտրոնի զբաղեցրած հարկաբաժինը հիմնամորթոգանն է գույքի համալրման խնդիր ունի:

Ի՞նչ է նախապետված պետությունը և ոչ միայն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ

Հանրապետության թիվ 1 ֆինանսական փաստաթղթի՝ պետությունը բնակարարության և կառավարման ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև պետության փոխհատուցման և դրական լույսի տակ ներկայացնել այն, տարբեր բնութագրումներ տալով՝ սոցիալական ուղղվածություն ունեցող, իրատեսական և այլն, ընդդիմությունը ջանում է հակառակն ապացուցել, ասելով, թե նախորդ տարվա համեմատ աղքատության տոկոսն աճել է, թռչանկներն ու նպաստներն անցան չափով են բարձրանում: Այնուամենայնիվ, բյուջեն հաստատվել է, մեզ մնում է պարզել, թե դրանից որքան գումար է նախատեսվել Սյունիքի մարզի համար և ըստ բնագավառների՝ որքան: Եվ այսպես, 2012թ. պետությունը մարզպետարանի միջոցով հատկացվել է 4 միլիարդ 798 միլիոն դրամ (նախորդ տարի հատկացված գումարը կազմում էր 4 միլիարդ 367 միլիոն դրամ): Մարզպետարանի ապարատի պահպանման և մարզի ճանապարհների ձեռնարկն սպասարկման գումարները նույնն են մնացել, համապատասխանաբար՝ 296 միլիոն և 105 միլիոն դրամ: 88 միլիոն դրամ նախատեսված է մշակույթի հիմնարկների պահպանության համար, մասնավորապես, Կապանի Ալ.Շիրվանզադեի թատրոնին՝ 36 միլիոն 900 հազար դրամ, Կապանի երկրագիտական թանգարանին՝ 9.8 միլիոն դրամ, եւ 7 միլիոն դրամ մշակութային միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Հատկացումներ են արվել նաև պատմամշակութային հուշարձանների վերականգնման համար. Կապանի Հալիծոր բերդին՝ 5 միլիոն դրամ, Որոտնավանքին՝ 12 միլիոն դրամ, նույնքան էլ՝ Կուրիսի Սբ Աստվածածին եկեղեցու՝ Ագարակի ՊՄԿ-ի բաց հանքի կոթից տեղափոխելու նպատակով նախագծման կազմելու համար:

Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մա-

սին ՀՀ օրենքին համապատասխան բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով սուբվենցիա է տրվել Կապան քաղաքին 14.8 մլն դրամ, Սյունիք համայնքին՝ 2.4 մլն դրամ:

Ինչպես տեղեկացանք մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունից, բացի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձեռնարկն պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման համար հատկացված գումարից՝ 105 մլն դրամ, որի մասին ակնարկեցինք վերելուն, կապիտալ շինարարության մասով այլ գումար չի տրամադրվել (խոսքը մարզպետարանի միջոցով հատկացվող ֆինանսական միջոցների մասին է): Բայց դա բնավ չի նշանակում, թե ընթացիկ տարում մարզում կապիտալ շինարարություն չի իրականացվում: Կապան քաղաքում, օրինակ, քաղաքաշինության նախարարության պատվերով իրականացվում են N2 ավագ դպրոցի ուսումնական մասնաշենքի, իսկ արդարադատության նախարարության պատվերով՝ դատարանի շենքի շինարարությունները: Նույն քաղաքաշինության նախարարության պատվերով դպրոցական շենքերի հիմնանորոգումներ են ընթանում Սիսիանի ու Գորիսի շրջաններում: Բացի դրանից՝ ՀՀ կառավարության սեպտեմբերի 29-ի որոշմամբ պահուստային ֆոնդից Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 720 միլիոն դրամ, ծրագրի մի մասը կատարվել է 2011-ին, այժմ ընթանում են Սիսիանի Ֆիզկուլտուրիկների փողոցի N2 բազմաբնակարան շենքի վերային 4-րդ մուտքի ուժեղացման և ամրացման, Գորիսի N2 և N5 դպրոցների վերականգնման, Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգման, Սառնակունքի հանդիսությունների ամսվերանորոգման, Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատման աշխատանքները, որոնք մի քանի ամսից կավարտվեն:

Պետությունից հատկացրած միջոցներով՝ մարզի որոշ ճանապար-

հահատվածներ բարեկարգ տեսք կստանան: Երկար չարջրված Նոնաձորի ճանապարհը փուլ առ փուլ նորոգվում է. Նոնաձորի կայարան-Նոնաձոր համայնք 2կմ 246մ ճանապարհահատվածի հողային պատահի վերականգնման համար նախատեսվել է 150 մլն դրամ: Ինչպես նշել էինք մեր թերթի սույն թվականի փետրվար 14-ի համարում, այդ աշխատանքների իրականացումը մրցույթով շահել է «Մեդու ճանապարհների շահագործում և շինարարություն ձեռնարկություն» ԲԲ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան): Ինչպես հեռախոսով հայտնեց տնօրենը, նախապատրաստական աշխատանք է տարվել, և համապատասխան տեխնիկան տեղափոխվում է շինարարական մարտի 25-ից նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար: Գորիսի տարածաշրջանում Գորիս-Կապան մայրուղուց մինչև Քարահունջ համայնք ձգվող ճանապարհահատվածը եւս բարեկարգ տեսք կստանա, ինչի նորոգման համար հատկացվել է 250 մլն դրամ:

Սյունիքի մարզպետարանը ներկայացրել էր Կապանի Շահունյան փողոցի գետափնյա հատվածի եւ Սյունիք համայնքից մինչև Կարմրաքար ընկած 12 կիլոմետրանոց ճանապարհատվածի նորոգման նախագծեր: Բայց նախապատվությունը տրվել է Գորիսի Արզումանյան փողոցի բարեկարգմանը (մոտ 280 մլն դրամ): Կապանի գործարարական միջին Հալիծոր թաղամասի կապիտալ շինարարությունը կամրոջն ընկած հատվածով կամրոջն ջանա այդ փողոցի բարեկարգումը, և զգալիորեն կբեռնաթափվի Հունան Ավետիսյան փողոցի երթեւեկությունը: Երեւան-Մեղրի միջպետական ճանապարհը ձգվում էր այդ փողոցով, և նեղ ու ծանրաբեռնված լինելու պատճառով անպակաս էին մտտորարանսպորտային պատահարները: Բայց տակավին հրատապ է մնում ներթափանցանքի որոշ ճանապարհահատվածների նորոգումը Ձորք, Բաղաբերդ թաղամասերում, մասնավոր դեպի Շինարարների թաղամաս տանող



ճանապարհահատվածը, որը ձեռնառ օրերին երբեմն անանցանելի է դառնում:

Ի լրումն այս ամենի՝ հայտնենք, որ բացի պետությունից հատկացվող գումարներով իրականացվող աշխատանքներից, մարզում ծրագրեր կիրականացվեն միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր ներդրողների կողմից հատկացվող ֆինանսական ներարկումների միջոցով: Կազմվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. միջոցառումների փաթեթը: Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թադեոս Ղազարյանի փոխանցմամբ՝ դրա ընդհանուր արժեքը կազմում է մոտ 21 մլրդ դրամ (պետությունից հետ միասին):

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Բեռնափոխադրումների ոլորտը՝ կանոնակարգման հրամայականի առջեւ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Սկզբը՝ էջ 1

իրականացնելու համար հարկային ծառայությունն անսակն մինչև 50 հազար դրամ (կախված ավտոմեքենայի բեռնատարողությունից), հարեւան երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետություն ելունուտ անելու համար՝ 19 հազար դրամ (9.6 հազար դրամ սահմանը հատելու, Իրան մտնելու և նույնքան գումար՝ Հայաստան մտնելու համար), մաքսային բեռ փոխադրելու համար «Վիլլա տրանս» ՍՊԸ-ին՝ 6 հազար դրամ (այս մասին մեր թերթը հանգամանորեն անդրադարձել է 2010թ. փետրվարի 10-ի «Մի ձեռնարկման մասին, որ միանշանակ չընդունվեց» հրապարակման մեջ): Իսկ բուն տերմինալում հազար դրամ է զանձվում ուղեբեռը կշռելու համար, այս վերջին վճարման համար վարորդներն իրենց տարակուսանքն էին հայտնում և միայնաց հորդորում չվճարել այդ գումարը: Սրան հավելենք՝ վարորդներից մեկի վկայությամբ՝ Իրանից բեռ տեղափոխելու և հասցեատիրոջը հասցնելու համար ծախսում են առնվազն 180 լիտր դիզելային:

Իսկ այս ամենից առաջ մաքսային բեռնափոխադրումների լիցենզիա ստանալու համար, ըստ ՀՀ Մաքսային օրենսգրքի, վարորդը տարեկան պարտավոր է վճարել բազային տուրքի (հավասար է հազար դրամի) հազարապատիկի չափով, այսինքն՝ 1 մլն դրամ:

Եվ այդքանից հետո հարկադիր պարապուրդներ, այն էլ օրերով, ինչը կատարյալ տնաքանդություն է նրանց համար. «Պիտի աշխատենք, չէ՞, որ տուն ու տեղ պահենք, երեխա կերակրենք, Նորդուզի մաքսակետում (Իրանի տարածքում է, ծանր. խմբ.) այս բեռից (սեվիտրա) կա, զանգում են, թե եկեք, տարեք: Բայց ո՞նց կարող են մաքսային կնիքը պահել, դրա համար է մի կլորիկ գումար տուգանք պիտի վճարեն: Փաստորեն մեքենաս էս պահին «ձեռքակալված» վիճակում է: Ըստ կարգի՝ 48 ժամը լրանալուց հետո պիտի դուրս գան տերմինալի տարածքից, բայց ու՞ր օր է՝ այստեղ ենք», – մտահոգություն է հայտնում միջառասակ մի վարորդ: Առավել քան զարմանք է հարուցում այն հանգամանքը, որ ըստ ամենայնի ներկրվող բեռն անհրաժեշտ է «Ձանգեզուրի պղնձամո-

լիբեզնային կոմբինատ» ՓԲ ընկերությանը, բայց թե ինչու է ձգձգվում բեռնաթափումը, մնում է միայն գուշակել:

«Ձեր իրավունքների պաշտպանության համար ի՞նչ եք ձեռնարկել», – հետաքրքրվեցինք: Պարզվեց, որ փորձեցին արդարություն գտնել մայրաքաղաքում, նրանց գերատեսչությունից գերատեսչություն են ուղարկել, բայց ապարդյուն, խնդրի լուծման ծայրը չի երևում: **«Երեք օր սառնամանիք եղանակին երեւանում շրջեցինք, եղանք պետեկամուտների կոմիտեում, նախագահն արտասահմանում էր, երեք տեղակալներով եկան, վիճեցին-վիճեցին, այդպես էլ մի հայտարարի չեկան, հետո ուղարկեցին տրանսպորտի և կապի նախարարություն, այնտեղից ֆինանսների նախարարություն, ի վերջո քոռ ու փոշման հետ եկանք»,** – պատասխանեցին մեզ:

Մեր զրուցակիցները հիշեցին, որ իրենց հուզող հարցերով դիմել են նաև Ազգային ժողովի ՀՀԳ խմբակցության պատգամավորներ Գագիկ Գեւորգյանին և Արա Նաչյանին, ովքեր խոստացան վարորդների պահանջները հանձնել վե-

րին առյուծներ (եւ հասցրին), բայց դարձյալ սայլը տեղից չի շարժվել:

Քանի որ վարորդներ կային նաև հեռու բնակավայրերից, փորձեցինք իմանալ՝ որտեղ են գիշերում, ինչպես են հայքայրում սնունդը: Գիշերում են մեքենաների խցիկներում, իսկ սնունդը հայքայրում են այստեղից-այնտեղից: Ի դեպ, տերմինալի կողքին «Դիան» կոչվող հյուրանոց կա, բայց այդքան վճարումներ կատարելուց հետո ո՞ր մի վարորդը կկարողանա օգտվել դրա ծառայությունից:

Վարորդների հետ զրույցից տեղեկացանք մի ուշագրավ փաստի մասին. ըստ մեր զրուցակիցների՝ բեռնափոխադրումներ իրականացնող իրանցի վարորդները պարապուրդի համար վճարվում են, դեռ ավելին՝ նրանց տեղափոխած բեռները ժամանակին մաքսազերծվում են հասնում են տիրոջը, իսկ թե ինչ է կատարվում հայ վարորդների հետ, կարծում ենք, համոզվեցինք: Ի հավելումն այս խտրականության՝ վերջիններից մեկը մտաբերեց հայտնի առածը. «Տերովին տերն է պահել, անտերին գելն է տարել»:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուրեր

Վապանի թիվ 9 և Գորիսի թիվ 3 դպրոցներում 15 առարկայից փետրվարի 25-ից մարտի 14-ն անցկացված դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլին Սյունիքում մասնակցեց 551 աշակերտ, որոնցից 96-ը, զբաղեցնելով առաջին և երկրորդ տեղեր, իրավունք են ստացել մայրաքաղաքում մասնակցել հանրապետական փուլին: Մարզային փուլը կազմակերպեցին և անցկացրեցին Գորիսի մարզպետի որոշմամբ ստեղծված կազմկոմիտեն և առարկայական հանձնաժողովները: Մրցանակային տեղերը հիմնականում բաժին են ընկել մարզի ավագ դպրոցների աշակերտներին, քանի որ հիմնական դպրոցներից մարզային փուլին մասնակցում էին միայն 9-րդ դասարանցիները: Լավագույն արդյունքներ են ցուցաբերել Կապանի N, N2, 9, Գորիսի N 4 և Սիսիանի ավագ, իսկ գյուղական դպրոցներից՝ Հարթաշենի, Կարճեւանի, Շվանիձորի, Խնձորեսկի, Վերիշենի, Ակնեի, Տաթևի, Օխտարի, Աճառանի, Բոնակոթի, Շամբի դպրոցների աշակերտները: Չնայած մարզային փուլում դպրոցականների ամենաշատ մասնակցությունը եղել է մաթեմատիկա առարկայից, սակայն նրանցից քչերին է հաջողվել հավաքել բարձր միավորներ: Աշակերտների մասնակցությունը սակավ է եղել ինֆորմատիկա առարկայից, իսկ աստղագիտությունից մասնակիցներ չեն եղել:

Հաշվի առնելով այն, որ «Դիմո գուլդ մայրից քամից» ՓԲ ընկերությունը ամենախոշոր են սոցիալական կայունություն ապահովող ձեռնարկությունն է Կապանում, մարզկենտրոնի վեց հասարակական կազմակերպության նախագահները մասնավոր դիմել են ընկերության տնօրեն Իլյա Գարկովին, որպեսզի ընկերության մասնագետների ուղեկցությամբ ապահովվի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների շրջանը ձեռնարկության արտադրամասեր և տեղամասեր: Նախաձեռնության նպատակն է ծանոթանալ ընկերության արտադրական գործընթացներին, բնապահպանական խնդիրներին, աշխատակիցների աշխատանքային պայմաններին: Իլյա Գարկովը դեռևս չի պատասխանել ՀԿ-ների առաջարկին:

Կապանի Հունան Ավետիսյան N1 շենքի դիմաց, շուկայի մերձակայքում, Ողջի գետի հունի վրա կառուցվում են երկաթբետոնե հարթակներ: Դրանք նախատեսված են տաղավարներ կառուցելու համար: Այդտեղ նախկինում անկանոն տեղադրված կրպակներն ապամոնտաժվել են: Սակայն հարթակները կառուցելուց հետո այդ կրպակների տերերը հնարավորություն կունենան աշխատել հարթակների վրա տեղադրվելիք տաղավարներում: Կառուցվող հարթակների թիվը երկուսն է, որոնք ունեն 118.25x5.20 հատակազգծային չափ: Աշխատանքներն իրականացնում է «Մ-ՄԿԱՍ» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Սանվել Սանուկյան): Կապանի քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Երանյանից հարցառելուց հետո, որ երկաթբետոնե հարթակներ կառուցելու համար նախնական տվյալներով կծախսվի 100 մլն դրամ: Այժմ աշխատանքները հիմքերի կառուցման և բետոնապատման փուլում են:

ԵՐԳԱՐՎԵՍ

Տիգրան Չեքեքյան. «Աստղերը փայլաբերակում են մթնոլորտի մեջ, արեւի լույսով՝ անհետանում»

«Այունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախմբի ղեկավար եւ դիրիժոր Տիգրան Չեքեքյանը

Սկզբը՝ էջ 2
Կանգնել կողմից: 1995թ. մասնակցեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի 50-ամյակին նվիրված միջոցառմանը, որը տեղի ունեցավ Երեւանի պաշտպանության օրը՝ Փարիզում: Երգչախումբը համերգներով հանդես է եկել եվրոպական վեց երկրում՝ Լեհաստանում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, ինչպես նաեւ շրջագայել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այսպիսի նշանակալից ձեռքբերումներով էլ սկիզբ դրվեց «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի հաղթարշավին, որը շարունակվեց նաեւ հետագայում: Այս համերգային ծրագրով հանդես եկավ Եգիպտոսում, Հունաստանում: 2007 թվականից ներգրավվել է «Եվրամիության երգչախմբեր» 300 անդամ ունեցող կազմակերպության մեջ: Նվաճել է «Եվրոպայի մշակույթի դեսպան» տիտղոսը: 2008-ին երգչախմբային արվեստի համաշխարհային ֆեդերացիայի կողմից ճանաչվել է աշխարհի լավագույն մանկական երգչախումբ: Երգչախմբի ղեկավար Տիգրան Չեքեքյանը հայտնեց, որ բազում ծրագրեր ունեն՝ կմեկնեն Մոսկվա՝ մասնակցելու այնտեղ կայանալիք միջազգային փառատոնի, հետո՝ Մերձբայթյան հանրապետություններում համերգներով հանդես կգան, այնուհետեւ կայցելեն Շվեդիա՝ կրկին միջազգային փառատոնի, ապա կմասնակցեն խմբերգերի համաշխարհային մրցույթին, իսկ ամռանը հյուրախաղերով կմեկնեն Ճապոնիա: Երգչախմբի գործունեությունը հովանավորում են Երեւանի քաղաքապետարանը, ՀՀ մշակույթի նախարարությունը:

աշխարհից ժամանած խմբերին ապահովել կեցության տարրական պայմաններով: Կրկին եղա Կապանի արվեստի քոլեջի դահլիճում, որը հնչողության առումով համարում են հանրապետության լավագույն դահլիճներից մեկը: Այն ունի բոլոր նախադրյալները, որպեսզի այստեղ անցկացվեն հանրապետական եւ, ինչու չէ, նաեւ միջազգային փառատոններ: Սակայն Արցախյան գոյամարտի հետքերն իր վրա կրող սրահը, եւ, որ ցավալի է, նաեւ այստեղ տեղադրված երգեհոնը, գտնվում են վատ վիճակում եւ վերանորոգման կարիք ունեն: Սկսեցի հնարավոր բոլոր միջոցների փնտրտուքը, որպեսզի կարողանանք մոտ ապագայում այստեղ, բացի մշակութային լայնամասշտաբ միջոցառումներից, նաեւ երգեհոնային երաժշտության միջազգային փառատոն անցկացնել: Խնդրանքով դիմեցի շատերին: Արձագանքեց Շվեյցարիայում բնակվող ընկերս՝ կոմպոզիտոր Դավիթ Հալաջյանը: Հայաստան ժամանեց իր ծանոթներից մեկի՝ երգեհոնի լավագույն վարպետ, հնչողության շտկման մասնագետ Ֆերդինանտ Շտեմերի հետ: Միասին եղանք Երեւանի բոլոր դահլիճներում, պարոն Շտեմերը կատարեց երգեհոնների մանրամասն զննում, ապա մեկնեցինք Կապան՝ Արվեստի քոլեջ: Շվեյցարացի մասնագետը հանձն առավ երգեհոնի՝ ավելի քան 35000 եվրո արժողությամբ վերանորոգման աշխատանքները կատարել անվճար: Մինչ այդ հարկ է վերանորոգել դահլիճը, ինչն էլ խոստացավ այս տարի ավարտել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Նա սիրով աջակցեց մեզ՝ պարոն Շտեմերին Կապանում պատշաճ ընդունելու գործում, որի համար շնորհակալ եմք:



ԱՅՅԵՔՅԱՆ Տիգրան Չեքեքյան, ծնվել է 1959 թ. Երեւանում: 1975 թ. ավարտել է Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանը, 1979-ին՝ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի խմբավարության բաժինը: 1982թ. ավարտել է Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռուս-հայկական բանասիրության ֆակուլտետը, 1984թ.՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի խմբավարության բաժինը, այնուհետեւ՝ ասպիրանտուրան: Ուսմանը զուգահեռ շուրջ յոթ տարի աշխատել է Աշտարակի եւ Ապարանի գյուղերի հանրակրթական դպրոցներում՝ լեզվի եւ գրականության ուսուցիչ: 1984 թվականից ղեկավարում է Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության կամերային երգչախումբը: Տիգրան Չեքեքյանը Բնական գիտությունների եվրոպական (Հանովեր), Բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիաների իսկական անդամ է, հեռուստատեսության եւ ռադիոյի ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս: Նա նաեւ համերգային արվեստի միջազգային ֆեդերացիայի, երիտասարդական երգչախմբերի եվրոպական ֆեդերացիայի, Մանկական երգչախմբային եւ կատարողական արվեստի միջազգային միության եւ Երգչախմբերի օլիմպիական մրցույթի խորհրդի անդամ է: 1992թ. ինքնել է «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիան, որի նախագահն է եւ նրա կազմում գործող «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը:

ուսմանը կազմակերպել Երեւանից հեռու, մարզային քաղաքներում, երբեմն էլ, ինչու չէ, գյուղերում: Այսպես է վարվում ամբողջ աշխարհը, եւ մենք էլ այդ կերպ վարվելով՝ գյուղ չենք անի: Օրինակ, վերջերս Գերմանիայի Բրեմեն քաղաքում, այլ ոչ Բեռլինում կամ Ֆրանկֆուրտում, տեղի ունեցավ երգչախմբային արվեստի խոշոր փառատոն, որ կոչվում էր «Համաշխարհային երգչախմբային խաղեր», կամ, ասենք, ԱՄՆ-ի Ցինցինատի, Հոլանդիայի Նալդույթ փոքր քաղաքներում եւ կազմակերպվում խոշոր երգչախմբային մրցույթներ, որոնց ժյուրիի կազմում են նույնպես ընդգրկված եմ: Աշխարհում հատուկեմտ դեպքերում են մշակութային մեծամասշտաբ միջոցառումները կազմակերպվում մայրաքաղաքներում: Փառատոնները մարզերում, սահմանափակ քաղաքներում կազմակերպելով՝ հարստացվում է մշակույթը մարզերում, եւ բեռնափոխվում է մայրաքաղաքային կենտրոնացումը: Նույնը կարելի է ասել նաեւ կինոարվեստի մասին՝ Կաննի կինոփառատոնի օրինակով: Եթե նույնիսկ աշխարհում դա ընդունված չլիներ, մենք՝ հայերս, պարտավոր ենք այդպես վարվել, քանի որ մեր լեռներից այն կողմ ոչ թե մեր հարեաններն են, այլ՝ թշնամիները: Եթե սահմաններն ամուր չլինեն, ապա ովքե՞ր՝ Խոչընդոտեն թշնամու հնարավոր մուտքը երկիր:

– Վերջին տարիների ընթացքում այդքան արագ հեղինակազդեցիկ եւ դարձան չափանշված երաժշտական դպրոցները... Ժամանակին շրջանառությունում անգամ կոնկրետ էր այդ դպրոցներ ընդունվելու համար, իսկ հիմա...

– Դա եւս իր պատճառներն ունի: Դասական արվեստն այսօր չի պրոպագանդվում, չի քարոզվում: Եկավ մի շրջան, երբ բոլորը գնում էին ջութակի, ինչու՞: Որովհետեւ Կարոն առաջին անգամ ջութակով հայտնվեց հեռուստատեսությունում: Իսկ ժողովուրդն ինչ տեսնում, այն էլ ուզում է: Նաեւ սոցիալական, կենցաղային մի շարք խնդիրներ են խոչընդոտում, որպեսզի երեխաները երաժշտական կրթություն ստանան: Օրինակ, ասենք, դիմորդները չեն դիմում կոնտրաբասի բաժին, որովհետեւ այն դժվար է տեղափոխել, կամ ջութակի բաժին չեն գնում, որովհետեւ տանը ջութակ չունեն եւ այլն:

– Մենք ունենք մշակույթի նախարարություն, որը կոչված է իրականացնելու քաղաքականություն այդ ոլորտում: Ի՞նչ ասել է մշակութային քաղաքականություն, թե չէ թացն ու չորը վարդոց են խառնվել իրար:

– Կարծում եմ, որ վերջին վեց տարվա ընթացքում մշակույթի նախարարությունը՝ համեմատած մյուս տարիների, ակտիվություն է ցուցաբերում: Գուցե իրավիճակն է այժմ ուրիշ, գուցե պայմաններն են փոխվել, սակայն իրապես ակտիվացել է մշակույթի նախարարության դերը մեր երկրի հոգեւոր-մշակութային կյանքում: Բայց մշակույթի նախարարությունը չպետք է այնքան մանրանա, որ գորուզիչը զբաղվի համերգների կազմակերպումով՝ փոքր երկրներին բնորոշ զարմացածությամբ (չեն ուզում օգտագործել կոնսերտները): Այդ գործով չարող են զբաղվել համերգային գործակալությունները, չէ՞ որ դա բիզնես է, իսկ մշակույթի նախարարության մտահոգության առարկան առաջին հերթին պիտի լինի երկրի մշակույթի զարգացումը: Մենք այսօր Հայաստան ենք «ներկրում» երաժիշտներ, արվեստագետներ՝ երկրի ներսում տիրող բաց ու դատարկությունը սքողելու համար: Մշակույթի նախարարությունը պիտի տա զարգացող, պիտի ուրվագծի

– Պարոն Չեքեքյան, 2011թ. հոկտեմբերի 1-ին ձեր երգչախումբը մենահամերգով ելույթ ունեցավ Կապանի մշակույթի քոլեջի դահլիճում եւ Վահանավանքում՝ Կապանի տոնի շրջանակներում: «Այունյաց երկիրը» ըստ պատշաճի լուսաբանեց այդ ելույթը եւ ընդհանրապես երգչախմբի մասնակցությունն այդ տոնակատարությանը: Եվ ահա ամիսներ անց դուք կրկին Կապանում եք, հավանաբար ծրագրեր ունեք Սյունիքի հետ կապված:

– Այո, դուք իրավացի եք: Մեր հեռավոր շրջաններում մշակութային կյանքն ակտիվացնելու ուղղված ամենատարբեր ծրագրերը վաղուց են խմորվում իմ մեջ: Հայաստանի սահմաններն զտոններում մարդկանց բարեկեցությունը, մշակութային հագեցած կյանքն, ըստ իս, մեր երկրի համար ունի ռազմավարական նշանակություն: Վերջերս որպես ժյուրիի անդամ մասնակցեցի աշխարհի ամենահայտնի երգչախմբային միջազգային մրցույթին, որը Գերմանիայի՝ ընդամենը 10000 բնակչություն ունեցող Մարկթորթերդորֆ գյուղին համաշխարհային հռչակ է բերել: Եւս մի անգամ համոզվեցի, թե որքան կարեւոր է նման միջոցառումների կազմակերպումը, օրինակ, Սյունիքի մարզում: Շտապեցի մեկնել այնտեղ: Ուսումնասիրեցի համերգադահլիճների վիճակը, եղա հյուրանոցներում, ճաշարաններում՝ տեսնելու, թե կարող են արդյոք

արային, ավելի պահանջված մասնագիտությունների: Եվ այն գումարը, որ այսօր ծախսվում է երաժշտական կրթություն ստանալու համար, տասնյակ տարիներ աշխատելով՝ հնարավոր չէ վաստակել: Բավականին մեծ գումարներ են ծախսվում պետպատվերի շրջանակներում (մոտ 320 մլն դրամ, եթե չեն սխալվում), որպեսզի աշակերտները տիրապետեն որոշ՝ մոռացության մատնվող գործիքների: Բայց նրանցից քչերն են հետազայում դառնում երաժիշտ: Մյուս կողմից՝ երեւանում կազմակերպվում են բազում համերգներ, եւ թվում է, թե շատ ակտիվ երաժշտական կյանք կա մայրաքաղաքում: Իրականում ավելի շատ հյուրընկալում ենք օտարերկրացի երաժիշտների: Կարծում եմ՝ ավելի կարեւոր է, որ ինքներս ունենանք բարձրակարգ

երաժիշտներ ու համույթներ եւ ինքներս կարողանանք շունչ տալ մեր մշակութային առօրյային, դուրս գալ միջազգային բեմեր: Ցավոք, այսօր, մեր լավագույն երաժիշտների մեծամասնությունն ապրում եւ ստեղծագործում է հանրապետությունից դուրս, քանի որ աշխատանքի փնտրտուքը նրանց ի վերջո տարել է այլ երկրներ:

– Դուք ճիշտ նկատեցիք, որ երաժշտական արվեստը, ինչպես եւ մշակույթի մյուս ոլորտները, կենսունակ են ու շարունակում են կենտրոնացվել մայրաքաղաքում: Հատուկեմտ միջոցառումներով, այցելություններով պատրաստեք ենք ստեղծում, թե մշակույթը, արվեստը նաեւ մարզերն են ընդգրկում:

– Երիցս ճիշտ է իմ դիտարկումը, որ պետք է մշակութային միջոցա-

ԵՐԳԱՐԿԵՍ

Քաղաքակառուցությունը...
 – Երգարվեստի մասին խոսենք: Երգը, մեր ոչ մասնագիտական կարծիքով, ամենազանազան կարծիքներով հիմնական բաղադրիչ ունի՝ խոսք և երաժշտություն, գունարած կատարողական վարպետություն: Զարմանալի բան է ստացվել՝ հիմա այնքան մարդ է ներկայանում իբրև երգերի տեսքի հեղինակ, որ զարմանում ենք: Իսկ արդյունքում, թույլ տվեք ասել, գեղարվեստական արժեքից զուրկ տեսքերի շարանի ենք բախվում: Հիշո՞ւմ եք Չարենցի «Ավետիք Իսահակյանին» բանաստեղծությունը՝ գրված բանտում՝ 1937թ. սեպտեմբերի 27-ին: Լսել էր փողոցում աշխատող մի մաքրարարի ինքնաբերական կատարումը՝ Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններից գրված երգի: Եվ հիացել էր ու խորհել՝

«Ա՛խ կուզեի ես ունենալ
 Գոնե մի երգ այնքան ջերմին,
 Որ գրեի խուղիս որմին-
 Եվ նա հավետ այնտեղ մնար»:

Երբ մի քանի տարի առաջ Տիգրան Մանսուրյանը զրույց ունեցավ մեր թերթի լրագրողի հետ, քննարկվեց նույն այս հարցը, ես եկան եզրակացության, որ կան չափածո գործեր, երբ երաժշտությունն ինքն իրեն է ծնվում, ինչպես, ասենք, Իսահակյանի, Սահյանի բանաստեղծություններից շատերի դեպքում: Օրինակ, Դամո Սահյանի «Մայրամուտ Մասայաց գագաթին» և այլն: Այսինքն՝ մեր գրական մեծերը նույնիսկ այս ոլորտում զգուշավորություն էին ցուցաբերում: Իսկ հիմա...

– Դուք շատ ճիշտ դիտարկում արեցիք: Նախ ասենք, որ չեն ընդունում, երբ արեւմտահայերեն գրված տեսքերը երգում են արեւելահայերեն առողջամտությամբ և արտասանությամբ: Արեւմտահայերենի հնչյունական համակարգը տարբերվում է արեւելահայերենից: Երկրորդ՝ ի սկզբանե խոշոր կոմպոզիտորները երգ գրելիս նախ կարդում էին բանաստեղծությունները, ոգեշնչվում դրանցով և ապա երաժշտություն գրում: Օրինակ՝ Էդգար Յովհաննիսյանն այդպես գրեց իր տերյանական շարքը, որն արժեքավոր գործ է հայ խմբերգային արվեստում, և կարդալիս զգում էս, որ այդ երաժշտությունը ճիշտ հենքի վրա է կառուցված: Դիտարկենք, օրինակ, մեր երգարվեստի լավագույն նմուշներից մեկը հանդիսացող «Երեւունի-Երեւանը», որի խոսքերի հեղինակը Պարույր Սեւակն է, երաժշտության հեղինակը՝ Էդգար Յովհաննիսյանը, ընդ որում, խոսքերը գրվել են երաժշտության հեղինակի խնդրանքով: Եվ այս դեպքում արդեն երգի բառերն իրենց հնչյունային համակարգով, ռիթմով ձուլվում են կոմպոզիտորի ներքին հույզերից բխած մեղեդու հետ, և ծնվում է իսկական երգարվեստի գործ: Այժմ այս մտածողությունը փոխվել է, սկզբից գրում են մի պարզունակ մեղեդի, հետո դա մեկ ուրիշը հարմոնացնում և գործիքավորում է՝ որոշակիորեն հարստացնելով այդ մեղեդին, հետո մեկ այլ մարդ բառեր է գրում՝ հարմարեցնելով մեղեդուն, որը ոչ բանաստեղծություն է, ոչ՝ ստանավոր, այլ անհասկանալի հանգավորված տեսք, և ստացվում է արհեստական, շինծոմ մի երգ: Նման պարագայում ավելորդ է խոսել ոգեւորվածության, ներշնչանքի մասին: Ազգային պատկանելություն չունեցող մեղեդի, լատինամերիկյան ռիթմերով, թուրքարաբական ծայնարտաբերմամբ... Ինչպես Միչուրինն իր փորձերի ժամանակ տանձը պատվաստում էր խաղողի հետ, ծմերկի համ տալիս, և ստացվում էր անհասկանալի համ ունեցող մի բան: Իհարկե, լինում են նաև բացառություններ:

– Որտեղով է անցնում շուրջ քիզ-

նեսի և երաժշտական արվեստի սահմանը: Շուրջ այնքան է ճնշել երաժշտական արվեստը, որ վերջինս հետզհետե կուլ է գնում, եթե արդեն կուլ չի գնացել: Եվ մենք չգիտենք, թե ինչու շուրջ քիզնեւսի ներկայացուցիչներին համառորեն «աստղ» ենք անվանում, պետական տարբեր կոչումներ տալիս: Գոյություն ունի՞ արդյոք ջրբաժան շուրջ քիզնեւսի և երգարվեստի միջև:

– Այդ ջրբաժանը գոյություն ունի ամբողջ աշխարհում, և հենց իրենց անվանումներով է որոշվում արվեստ և շուրջ քիզնեւս: Առաջինը՝ արվեստը, ստեղծվում է մնում է դարեդար, մյուսը՝ քիզնեւս է, այսպես ասած՝ ցուցքի արվեստ, և այստեղ յուրաքանչյուր ոք ցուցադրում է իր ունեցածը: Հայտնի անեկդոտի հերոսի օրինակով, այսօր մեր երկրում, և ոչ միայն մեր, պարտադիր չէ ունենալ տաղանդ, ծայնային տվյալներ, պրոֆեսիոնալիզմ: Շուրջ քիզնեւսի ոլորտում կայանալու համար հարկավոր են մեծ գունարներ: Նույնիսկ այսօր կարելու է չեն արտաքին տվյալները, որովհետեւ ֆինանսական միջոցներով դա ես հնարավոր է ձեռք բերել: Սրանից ամենեւին վատ զգալ պետք չէ, սա էլ քիզնեւսի տեսակ է, ինչպես ասենք՝ սննդի առետուրը: Ինչ վերաբերում է «աստղերին», ապա աստղերը փայլատակում են մթության մեջ, արեւի լույսով՝ անհետանում: Երբ Շառլ Ազնավուրի համերգից հետո հնչեց այն կարծիքը, թե նա իսկական «աստղ» է, ես ասացի. «Ազնավուրն աստղ չէ, նա արեգակ է, երբ նա բեմ է դուրս գալիս, բոլոր «աստղերը» խամրում են»:

– Երգարվեստի երեւելի դեմքերը, հատկապես վերջին տարիներին, սկսել են ձուլվել քաղաքական համակարգի հետ՝ մոռանալով իրենց իսկ կոչումը: Եթե Ռուսաստանում Ստանիսլավ Գոլդուխին ռեժիսորը դառնում է Պուտինի նախընտրական շտաբի պետ, ապա մի քանի օր անց էլ մեզ մոտ, օրինակ, Մարտին Վարդապարյանը, մեր կողմից շատ սիրված Արամ Սաթյանը ծյունառատ օրերին 31-ով մեզ կոչ են անում՝ դուրս գալ և փողոցի ծյունը մաքրել, մեզ համոզում են, որ Երեւանի քաղաքապետարանը շատ էլ լավ մաքրում է փողոցի ծյունը: Մի քանի երգիչ-երգչուհի էլ, հատկապես նախընտրական շրջանում ելույթի ընթացքում հնչեցնում: Մի՞թե այդ ամենը հարիր է երգարվեստին:

– Անշուշտ, եթե որեւէ մեկը քեզ գումար է հատկացնում քո գործունեության համար, պետք է շնորհակալ լինես: Յուրաքանչյուրն իր երախտագիտությունը հայտնում է իր ելույթանը, մտածելակերպին և դաստիարակությանը համապատասխան: Հասարակական գործունեությունը միշտ համարել են մտավորականի ամենատեղի կոչումը: Քաղաքը մաքրելու կամ այլ նման կոչերի մեջ ոչ մի վատ բան չեն տեսնում: Ուղղակի դա լավ է, եթե արվում է ներքին թելադրանքով, այլ ոչ որեւէ մեկին հաճոյանալու նպատակով: Այդ երեւոյթը ժառանգել ենք խորհրդային ժամանակներից: Խորհրդային իշխանությունը բարձրացնում էր արվեստագետի հեղինակությունը ըստ արժանվույն, նույնիսկ՝ ավելին, ապա այդ նույն արվեստագետին օգտագործում իրենց պարտադիր հաճոյանալու, գաղափարախոսությունը գովերգելու գործում և այդ ծառայության դիմաց նրանց շնորհում և պարգևներ, կոչումներ, բնակարան և այլ դեպի արտասահմանյան լսարան: Խորհրդային շրջանից հետո մի կարճ շրջան այս երեւոյթը



դադարեց, սակայն, ի վերջո, մեր իշխանությունները, կուսակցությունները որոշեցին օգտվել շատ օգտավետ այս մեթոդից: Եվ ասենք, որ շատերն ինքնակամ կլանվում են այս համակարգի մեջ: Եվ այս միջոցով էլ ձեռք են բերում հնարավորություններ ու արտոնություններ և կարողանում են այդ կերպ ծավալել գործունեությունը: – Ցավալի է նաև փաստը, որ այդ երեւոյթները Երեւանից շատ արագ տարածվում են անգամ մարզեր, և մեր մարզը բացառություն չէ: Համայն այդ շուրջ քիզնեւսի «աստղերը» այս կամ այն առիթով հրավիրվում են մարզ, և նրանց վճարում են շատ մեծ գումարներ: Դա միայն այն բանի համար, որ այդ «աստղը» ելույթի ժամանակ մի քանի անգամ հնչեցնի պատվիրատուի անունը: Գոնե ժամանակ առ ժամանակ տոներին, միջոցառումներին հրավիրեն դասական համույթներ, իսկական արվեստի ներկայացուցիչներ: Եվ դրանում, կարծեք, մեղավոր չեք միայն դուք՝ արվեստի դրոշակակիրները: Նաև մենք ենք մեղավոր, որ թույլ ենք տալիս այդպիսի անճաշակություն սերմանել մեզանում: – Մեղավորն այստեղ նա է, ով պահանջում կամ պատվիրում է այդ անճաշակությունը: Յուրաքանչյուր կատարող ունի իր գինը, և եթե նրան վճարում են, նա էլ պիտի շնորհակալ լինի, զովաբանի իր պատվիրատուին: Վերջինս կարող է լինել քաղաքական գործիչ, պատգամավոր, խոշոր գործարար, նախարար: Ամեն մի պատվիրատու ինքն է ընտրում այն կատարողին, ում ինքը գերադասում է մյուսներից: Եվ սա հենց այն նույն «մշակութային» քարոզչության հետեւանքն է, որի մասին խոսեցինք: Ցավալի այն է, որ ժողովուրդը հաճույքով ունկնդրում է իրեն մատու-

ցած ամեն ինչը: Ուրեմն պետք է նախեւառաջ կրթել ժողովուրդին: – Եվս մեկ հարց՝ երգարվեստի ոլորտին առնչվող: Այսօր հաճախ հեռուստաեթերից լսում ենք ժողովրդական, աշուղական, գուսանական, նույնիսկ Կոմիտասի երգերի ամենատարբեր մշակումներ: Չե՞ր կարծիքով կարելի է արդյոք մշակման ենթարկել այնպիսի գործեր, ինչպիսիք են Կոմիտասի, Սայաթ-Նովայի ստեղծագործությունները... – Դա նույն երեւոյթն է, ինչպես, ասենք, փորձենք մշակել Մոցարտի սիմֆոնիաները: Իմ կարծիքով դա հեղինակային իրավունքի կոպիտ խախտում է նախեւառաջ: Եթե երգահանը գրել է այս կերպ, ապա ո՞վ իրավունք ունի փոխել, մշակել այդ երգը: Ամբողջ աշխարհում կա ընդունված մի կարգ, երբ ստեղծագործողն իր գործում օգտագործում է այլ հեղինակի գրած երաժշտությունից մի հատված, ապա պարտադիր հղում կատարում: Օրինակ, Արամ Խաչատրյանը «Ռուսկան ախպեր» ժողովրդական մեղեդին օգտագործել է իր սիմֆոնիայում: Սա նորմալ, օրինաչափ երեւոյթ է: Բայց երբ Կոմիտասն արդեն գրել է, ոչ ոք իրավունք չունի վերափոխել, մշակել: Ցանկացողը թող վերցնի ինքը, որից օգտվել է Կոմիտասը, և ինքը ես մշակման ենթարկի: Մերօրյա այդ մշակում կոչվածը, ըստ երեւոյթին, չիմացության, ոչ պրոֆեսիոնալիզմի հետեւանք է: – Եվ վերջին հարցը, 31 հեռուստաընկերության «Երգ երգոց» երաժշտական ծրագիրը որոշակի արձագանք է գտել հեռուստադիտողների շրջանում: Սակայն, կարծեք, ինչ-որ մրցավազք կա այդ հաղորդաշարում՝ կատարող երգիչ-երգչուհիներին գովաբա-

նելու, փառաբանելու հարցում: Վերջին շրջանում այդ երեւոյթն ինչ-որ չափով, կարծեք, զգել է հաղորդման սկզբնական մակարդակը: Օրեր առաջ, երբ այդ ծրագրով ներկայացրին մեր հայրենակցին՝ Գուսան Աշուտին, Սյունիքում որոշ արձագանքներ եղան հաղորդման վերաբերյալ, ընդ որում՝ բացասական արձագանքներ: Նախ՝ շատ վատ ներկայացվեց նրա արվեստը: Տպավորություն ունենք, որ հաղորդման հեղինակներն իմիջիայլոց էին վերաբերվել հաղորդման պատրաստմանը, նույնիսկ մոռացել էին նրա ծննդավայրը, նույնիսկ ինչ-որ անհայտ բանաստեղծություն էին վերագրել, որի հեղինակն Աշուտը չէ: Իսկ Աշուտի երկու երգ նույն հաղորդման ժամանակ կատարվեց երկու անգամ: Կարծեք՝ եթե լցնելու ուրիշ ձև չէին գտել: – Դժվարանում են պատասխանել ձեր հարցին, որովհետեւ չեն հետեւում հեռուստատեսային ծրագրերին: «Երգ երգոցին» մասնակցել են մեկ անգամ՝ Ստեփան Լուսինյանին նվիրված հաղորդմանը՝ ընդամենը քառորդ ժամով: Կարծում են՝ խնդիրն ընդհանուր է: Այսօր լրագրողները շատ ցածր են վարձատրվում: Բնականաբար՝ հաղորդում և հոդված պատրաստելու ժամանակ քիչ են ունենում, ստիպված են քանակ ապահովել, իսկ դա որակով իրականացնելն այդքան էլ հեշտ չէ: Եւ, ինչպես ասեն անգամ, բարդ իրավիճակից դուրս ենք գալիս միայն նվիրյալների շնորհիվ: – Շնորհակալություն հետաքրքիր գրույցի համար: Զրույցը՝ ԱՐԱՎԵՆ ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆԻ 23 փետրվարի 2012թ.

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Ընտրական
մարաթոնի
մասնակիցները
Սյունիքից

Սկզբը՝ էջ 1

նի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում եւ այդ ինստիտուտի (հետագայում՝ պոլիտեխնիկի) Գորիսի մասնաճյուղում: 1986-92թթ. եղել է այդ մասնաճյուղի ֆիզմաթ ամբիոնի վարիչ: 1976-78թթ. ստաժավորվել է Մոսկվայի պետական համալսարանում: 1980-ականների վերջին ԳՅՀ Գորիսի կազմակերպության ղեկավարն էր: 1992-94թթ. եղել է Գորիսի քաղաքապետի տեղակալ: 1999-ից աշխատում է Երեւանի Խ.Ա. Բովյանի անվան մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկական անալիզի եւ ֆունկցիաների տեսություն» ամբիոնում, որի վարիչն է 2006 թվականից: Անկուսակցական է, սակայն, նրա թեկնածությունը պաշտպանում է ՀԱԿ-ը (նա զբաղեցնում է նաեւ ՀԱԿ-ի համամասնական ցուցակի 43-րդ տեղը):

ծելակերպն ու մոտեցումը: Իրականում, մինչդեռ, մեր երկիրը կառուցել ենք եւ շարունակում ենք կառուցել այնպես, որ տեղային զգացմունքները կուսակցականից, գաղափարականից վեր են: Հենց այդ համագանձքն է թույլ տալիս ասել, որ գորիսյան ծագումով թեկնածուները Սիսիանում ծայրեր հավաքելու քիչ շանս կունենան, ինչպես եւ սիսիանցի թեկնածուները՝ Գորիսում: Տա Աստված, որ մեր դիտարկումը սխալ չլինի: Միգուցե այդ մոտեցումը որոշ չափով նահանջի թեկնածուների նախընտրական ծրագրերի ազդեցությամբ: Ուրեմն՝ սպասենք թեկնածուների նախընտրական ծրագրերին եւ այն գաղափարների մատուցմանը, որոնց մղումով այդ մարդիկ առաջադրվել են պատգամավորության թեկնածու եւ ուզում են ծառայել Գորիսի ու Սիսիանի բնակչությանը:

**N38 ընտրապարածք.
մրցակցության փոսի՛լք, թե՛...**

2004 եւ 2007թթ. պատգամավոր ընտրված Վահե Հակոբյանը նորից է ուզում խորհրդարան մտնել: Նրան առաջադրել է հարազատ կուսակցությունը՝ ԳՅՀ-ն: Ծնվել է 1977թ. Քաջարան քաղաքում: 1999-ին ավարտել է Երեւանի ժողովուրդների ինստիտուտի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետը: 2003-ին պաշտպանել է գիտական թեզ եւ ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Այս թեկնածուին 2007-ին ձեռնոց էր նետել ՕԵԿ-ի ներկայացուցիչ Գերասիմ Ավարդյանը, իսկ հիմա՝ ՀԱԿ-ի ներկայացուցիչ Դավիթ Մաթեոսյանը եւ ՀՀԴ անդամ Գագիկ Գեւորգյանը: Վահե Հակոբյանը միաժամանակ զբաղեցնում է ՀՀԿ համամասնական ցուցակի 187-րդ հորիզոնականը:

Դավիթ Մաթեոսյանը ծնվել է 1960թ. Սեղրու շրջանի Կարճեւան գյուղում: 1982թ. ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ հիդրոտեխնիկի մասնագիտություն: 1985-91թթ. եղել է Կարճեւանի պետտնտեսության տնօրեն, 1991-95թթ.՝ Սեղրու ՆԳ բաժնի պետ՝ շրջանի պաշտպանությունն ապահովելու եւ տեղում բանակի ձեւավորման աշխատանքները համակարգելու լիազորություններով: 1995թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 1996-98թթ. եղել է Սյունիքի մարզպետի տեղակալ, 1999-2000թթ.՝ ՀՀ կառավարության առընթեր «Հայաստառի» տնօրեն: 2007-ի ԱԺ ընտրություններին, որպես պատգամավորի թեկնածու, մասնակցել է «Իմպիչմենտ» դաշինքի կողմից: 2007-ի աշնանը Հայաստանում սկիզբ առած համաժողովրդական շարժման առաջնորդներից է: 2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակի վրա հարձակումից մեկ ժամ հետո բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, իսկ ավելի ուշ դատապարտվել երեք տարվա ազատազրկման: Սեղադրանքն առաջադրվել էր ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի



ԾՄԻ ՂԾՔԻՆՆՆԻ
Հայաստանի
հանրապետական
կուսակցություն



ՕՔԵՒ ԲՕԵՈՍԻ
Անկուսակցական



ԲՔԵՒ ԲՔԻՆՆԻ
Անկուսակցական




ԵՔԾԻ ՕԵԾՔԻՆՆԻ
Անկուսակցական



ԶԾԻ ԵԵԵԻՆՆԻ
Անկուսակցական



ԻՔԾԻՆՆԻ
Անկուսակցական



ԾՄԻ ԶԾԵՔՆՆԻ
Անկուսակցական



ՂԾՔԻ ՂԻՆՆԻ
ՀՀԿ կուսակցություն



ԻՔԾԻՆՆԻ
Հայաստանի
հանրապետական
կուսակցություն



ԶԻԵՒ ԹՔԻՆՆԻ
Անկուսակցական



ՍՔԾՔԻՆՆԻ
Անկուսակցական

ծի 1-ին մասով՝ իշխանության ներկայացուցիչ նկատմամբ բռնության գործադրում: «Քյու-Հաշ» ՄԴԸ տնօրեն Դավիթ Մաթեոսյանը տեղ է գտել ՀԱԿ-ի համամասնական ցուցակում (17-րդ տեղ):

ՀՀԿ-ի կողմից N38 ընտրատարածքում առաջադրված Գագիկ Գեւորգյանը տեղ է գտել նաեւ այդ կուսակցության համամասնական ցուցակի 14-րդ տեղում: Ծնվել է 1965թ. Կապանում, 1980թ. ավարտել է Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, 1984-86թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1990 թվականից մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին՝ սկզբում «Գարեգին Նժդեհ» ջոկատում, 1992-94թթ.՝ Կապանի բրիգադի հետախուզական վաշտում: 2007թ. ԱԺ պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով՝ ՀՀԿ կուսակցությունից, որի Գերագույն մարմնի անդամ է ներկայումս: Այդ ընտրատարածքում ինք-

նա առաջադրվել է նաեւ Նարինե Մովսիսյանը՝ Երեւանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կենտրոնի տնօրենը: Ծնվել է 1966թ., ներկայումս անկուսակցական է: Նրա առաջադրումը, ըստ տեղական դիտորդների, անսպասելի էր, եւ հայտնի չէ առաջժ, թե քաղաքական որ ուժը կատարի նրան: Այնուհետ է միայն, որ նրա առաջադրմամբ Կապանում ստեղծվում է նախընտրական մոր պատկեր:

ԹԻՎ
37
ԺՊՈՄՏՈՍՏՈՂ
ԹԻՎ
38
ԺՊՈՄՏՈՍՏՈՂ

Մարզի հասարակական-քաղաքական կյանքում դեռեւս անհայտ Արտակ Սիսակյանը նույնպես պատգամավորության թեկնածու է առաջադրվել: Ծնվել է 1961թ. Բոնակոթ գյուղում, 1987թ. ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի գյուղմեքենայացման ֆակուլտետը: Անկուսակցական է: 1980-82թթ. ծառայել է խորհրդային բանակում, 1987-89թթ. եղել է Սիսիանի գյուղավարչության գլխավոր ճարտարագետ, 1989-92թթ.՝ Բոնակոթի տնտեսավարկային ձեռնարկության տնօրեն, 1992-93թթ.՝ Սիսիանի շրջխորհրդի գործկոմի կազմբաժնի վարիչ, այնուհետեւ զբաղվել է գյուղատնտեսությամբ: 2009-ից «Սիսիան» ՏՕԸ-ի փոխտնօրենն է: ...Մեր օրերում, իհարկե, բոլորն առերես մերժում են տեղային մտա-

Մաթիմ Հակոբյանի մերժվող բարեկամներից է, ծագումով՝ Ծավ գյուղից: Թեկնածուների այս սպեկտրը (նույնպես աննախադեպ է վերջին տարիների կտրվածքով), թույլ է տալիս ասել, որ N38-ը հանրապետության սակավաթիվ ընտրատարածքներից մեկն է, որտեղ նախընտրական պայքարն ավելի շատ գաղափարական բնույթ կկրի, ինչը, սակայն, կարող է եւ չամրադրաճանալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա: Մենք ենք միայն ստեղծել այնպիսի ընտրական համակարգ, ընտրողի այնպիսի տեսակ, որոնց պարագայում գաղափարներն ու ծրագրերը ոչ միշտ են նշանակություն ունենում: Այնուամենայնիվ, տեսնենք, թե ինչ ծրագրեր կներկայացնեն եւ ինչպիսի նախընտրական մարտեր կմղեն մեր թեկնածուները:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԱՄԿԵԼ ԹԱՆԳՅԱՆ. «Ես կառաջադրվեմ Սիսիանի քաղաքապետի թեկնածու՝ հաղթելու վճռականությամբ»

«Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետը

ՆԱԽԵՆՏՐՈՒԿԱԼ

Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանի հետ մարտի 19-ին կայացած զրույցում քննարկեցինք մարզի բնապահպանական վիճակը, մարզպետարանի գործառնությունները բնապահպանության ոլորտում, գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացման եւ դիզվառնելիքի, ազդարանական պարարտանյութի բաշխման ընթացքը, ոռոգման նոր սեզոնի խնդիրները:

Մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետի կարծիքով բնապահպանության ոլորտի առաջնահերթ խնդիրներից են գյուղական համայնքների աղբահանությունը, որը հիմնականում չի կատարվում: Համայնքների մեծ մասում չկան նաեւ կոյուղագծեր, իսկ կոյուղաջրերը թափվում են գետերի մեջ, ինչից օգտվում ենք ոռոգման նպատակով: Մտահոգիչ է նաեւ պոչամբարային տնտեսությունների վիճակը:

Ս.Թանգյանը պատմեց գյուղացիներին հատկացվող դիզվառնելիքի եւ ազոտական պարարտանյութի մասին, որոնք այս անգամ նույնպես բաշխվում են համայնքային իշխանությունների կողմից: «Այդ գործընթացն այժմ շարունակվում է եւ կատարվում է առանց խոչընդոտների, ամեն մեկը ստանում է պարարտանյութ՝ վճարած գումարին համապատասխան», - ասաց նա: Մեր կարծիքով, մինչդեռ, պարարտանյութի արդարացի բաշխումը շարունակում է մտահոգել գյուղացիների մի մասին:

2011-ին մարզում կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 14127 հա աշնանացան (3700 հա-ով ավելի նախորդ տարվա համեմատությամբ): Կատարվել է 3000 հա ցրտահերկ, սպասվում է, որ կկատարվի 7000 հա գարնանացան (800 հա-ով ավելի, քան նախորդ տարում): Սերմերի խնդիր, ըստ Ս.Թանգյանի, չկա:

Ըստ էության գարնան գյուղատնտեսական աշխատանքներին հիմնա ավելի շատ խանգարում են եղանակային պայմանները, եղանակը պետք է թույլ տա, որ աշխատանքները սկսվեն:

Ընթացիկ վերանորոգման խնդիրներ կան մարզի ոռոգման համակարգերում: Ենթադրվում է, որ մինչեւ ոռոգման սեզոնի սկիզբ կկատարվեն համապատասխան աշխատանքներ:

Մարզի գյուղատնտեսությունը շարունակում է մնալ հին տեխնիկայի հույսին: Վերջին մեկ տարում մարզի գյուղտեխնիկայի պարկը նոր մեքենաներով չի համալրվել: Հատկապես մտահոգիչ է հացահատիկահավաք կոմբայների վիճակը, ինչի պատճառով գրանցվում է բերքի մոտ 20 տոկոսի կորուստ: Իսկ հացահատիկահավաք նոր կոմբայի արժեքը հասնում է մոտ 80 հազար դոլարի, որը, արտոնյալ վարկի պարագայում անգամ, ոչ միշտ է ձեռնտու նույնիսկ ֆերմեր-



ներից: Ըստ վարչության պետի՝ ապրիլի 1-ից կվերսկսվի 14 տոկոսանոց (սուբսիդավորված) վարկի տրամադրումը: Գյուղացիները, մինչդեռ, այնքան էլ ոգետրված չեն այդ վարկով, քանզի սոցիալական արդարությունն այդ հարցում ես կաղում է երկու ոտքով, եւ անհասկանալի պատճառներով ոչ բոլոր գյուղացիներն են կարողանում օգտվել դրանից:

Սակայն ամենաուշագրավը նախընտրական իրավիճակին առնչվող հարցերն էին, որոնց շուրջ մեր զրույցը ներկայացնում ենք ստորեւ:

– **Պարոն Թանգյան, Դուք ՀՀ Սիսիանի շրջանային կազմակերպության նախագահն եք, բայց, որքան էլ տարօրինակ է, Սիսիանում Ձեզ չեն վստահել այդ կուսակցության նախընտրական շտաբը դեկավարելու գործը:**

– Չեմ կարծում, որ դրանում տարօրինակություն պետք է փնտրել: Ես Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետն եմ, գարնանացանի օրեր են, բազմաթիվ խնդիրներ ունենք, զբաղված եմ ամենօրյա ծանրաբեռնված աշխատանքով, ուստի եւ լրացուցիչ պարտականություններ ստանձնելը ճիշտ չէր լինի: Նախընտրական շտաբի ղեկավարը մոտ երկու ամիս լուրջ խնդիրներ ունի լուծելու, ինչը պահանջում է նվիրական աշխատանք, ինչը բացառում է այլ գործերով զբաղվածությունը: Իսկ ես որպես ՀՀ-ի Սիսիանի տարածաշրջանի պատասխանատու հնարավոր ամեն ինչ կանեմ, որ Սիսիանի նախընտրական շտաբն իր առաքելությունն ամենայն պատշաճությամբ իրականացնի:

– **Այդ «նշանակուհի» հետո Սիսիանում խոսակցություններ են շրջանառվում, որ աշնանը կայանալիք ՏԻՄ ընտրություններում Դուք չեք լինելու Սիսիանի քաղաքապետի հանրապետական թեկնածուն, ընդ որում՝ արդեն շրջանառվում են կոմկրետ անուններ:**

– Այսօր արդեն կարող եմ հայտարարել, որ աշնան առաջադրելու եմ իմ թեկնածությունը Սիսիանի քաղաքապետի ընտրությունում: Բոլոր հիմքերն ունեն ասելու նաեւ, որ ես եմ լինելու ՀՀ-ի թեկնածուն:

Շատ բնական եմ համարում, որ ՀՀ Սիսիանի կազմակերպության շարքերում կան քաղաքապետի այլ հավակնորդներ եւս: Բայց այլ բան է հավակնություններ ունենալ, մեկ այլ բան՝ կուսակցության թեկնածուն լինել այդ ընտրությունում:

– **Բայց Դուք 2008-ին առաջադրվեցիք քաղաքապետի թեկնածու, ընդ որում՝ իշխող կուսակցության թեկնածուն էիք, եւ պարտություն կրեցիք: Կա՞ ներառյալ, որ այս անգամ հաղթանակի կհասնեք:**

– Այն ժամանակ այնքան էլ լավ չենք աշխատել: Մի քիչ ավելի լավ պիտի աշխատեինք: Այս անգամ այդ թերությունները չենք կրկնի: Կարող եմ ասել՝ ես կառաջադրվեմ Սիսիանի քաղաքապետի թեկնածու՝ հաղթելու վճռականությամբ, ինչի համար բոլոր հիմքերը կան:

– **Մի քանի օր առաջ, երբ Սիսիանում ստեղծվում էր ՀՀ-ի նախընտրական շտաբը, այնտեղ հայտարարություն հանչեց (ըստ Սիսիանում շրջանառվող խոսակցությունների), որ Աղասի Հակոբջանյանը Սիսիանի քաղաքապետի պաշտոնում չի կայացել: Արդյո՞ք դա ՀՀ շրջանային կազմակերպության պաշտոնական տեսակետն է:**

– Դա մեր կազմակերպության պաշտոնական տեսակետը չէ, դա մասնավոր կարծիք է, որ շրջանառվում է շտաբից դուրս: Մեր կազմակերպության խորհուրդը դեռ մնան հարց չի քննարկել:

– **Դե եթե Դուք այսօր հայտարարում եք քաղաքապետի թեկնածու առաջադրվելու մտադրության մասին, ուրեմն Ձեր կազմակերպությունը բավարարված չէ Սիսիանի քաղաքապետարանի ներկա գործունեությամբ:**

– Կգա ժամանակը, եւ ավելի հանգամանակից կներկայացնեմ իմ հիմնավորումները եւ այն հարցի պատասխանը, թե ինչու եմ ուզում դառնալ Սիսիանի քաղաքապետ:

– **Սիսիանում կարծիք կա տարածված առ այն, որ Դուք, լինելով՝ նախ Սյունիքի մարզպետի խորհրդական, ապա՝ մարզպետարանի վարչության պետ, հնարավոր ամեն ինչ արել եք եւ անում եք Սիսիանի քաղաքապետարանի հեղինակությունը զցելու համար: Դուք չե՞ք լսում Սիսիանում շրջանառվող այդ խոսակցությունները:**

– Իմ ոճը չէ դա: Պարոն Հակոբ-

ջանյանն էլ հավանաբար այդպես չի մտածում: Քաղաքապետարանի լավ, արդյունավետ գործունեության համար ես միայն ուրախ կլինեմ, ինչպես եւ ամեն մի սիսիանցի: Դրանք ասելուս են, որոնք իրականության հետ կապ չունեն եւ ձեռնտու են միայն որոշ մարդկանց:

– **Բնութագրեք, խնդրեմ, Սիսիանի նախընտրական մրցույթը:**

– Մեր կուսակցությունը տրամադրված է մաքուր ընտրությունների, քաղաքակիրք ընտրապայքարի: Լարվածության, մեկն մյուսի դեմ տրամադրվելու, գործելու իմաստ չեն տեսնում: Թող ժողովուրդը որոշի, թե որ քաղաքական ուժին որքանով է վստահում:

– **Իսկ ինչպե՞ս եք գնահատում ՀՀ-ի վարկանիշը շրջանում:**

– Թող անհամեստ չինչի, բայց այսօր համրապետականները Սիսիանում ավելի մեծ հեղինակություն ունեն, քան 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների նախօրյակին:

– **Սիսիանից, եթե նկատի չունենանք երեսնամյա Թաթուլ Հակոբյանին, ոչ ոք, ինչպես եւ 2007 թվականին, չառաջադրվեց Աժ պատգամավորության թեկնածու Սիսիանի շրջանն ընդգրկող թիվ 37 ընտրատարածքում: Ինչպե՞ս հասկանալ այդ իրողությունը:**

– Առաջադրումը կամ ինքնառաջադրումն ինքնապատակ չպետք է լինեն: Չպետք է մարդ պատգամավորության թեկնածու առաջադրվի իր տեղը ցույց տալու, ինչ-որ մեկին խանգարելու համար կամ զուտ փառասիրությունից դրդված: Պատգամավորության թեկնածու առաջադրվելու համար նախեւառաջ տվյալ անձը պետք է քաղաքական լուրջ հենարան ունենա հասարակության մեջ: Իսկ առհասարակ՝ որեւէ մեկին ոչ ոք չի խանգարել, ուզում էին՝ թող առաջադրվեին:

Ինչ վերաբերում է Սիսիանին, ապա եւ 2007-ին, եւ այսօր եղել են ու կան արժանավորներ, ովքեր կարող էին եւ են կատարել պատգամավորի պարտականությունները: Բայց, կրկնում եմ, այդ մարդկանց ձգտումները պետք է հանրակրթական քաղաքական այս կամ այն ուժի ցանկությունը: Հակառակ դեպքում, անգամ առաջադրվելու եւ ընտրվելու պարագայում, այդ անձը չի կարող արդարացնել իր ընտրողների սպասելիքները:

– **Ճի՞շտ է, որ իշխանությունները Ձեզ խորհուրդ են տվել թիվ 37-ում առաջադրվել պատգամավորի թեկնածու, բայց ոչ թե պատգամավոր ընտրվելու, այլ Սիսիանի ծայրերը ցաքուցրիվ անելու համար, ինչին Դուք չեք համաձայնել: Չե՞ք կարծում, որ ինքնուրույնության մասն դրսևորումը, եթե իսկապես տեղ է գտել, կանդիդատներն Ձեր կարիերային:**

– Ոչ, դա իրականությանը չի համապատասխանում, մնան առաջարկ եւ չեն ստացել, բացի այդ՝ ինքս ցանկություն չունեմ պատգամավորության թեկնածու առաջադրվել, քանի որ թեկնածությունս առաջադրելու եմ Սիսիանի քաղաքապետի առաջիկա ընտրությունում:

Տխրո՛ւ... խոր ու խիտ մշուշ
Իջել է օրերին քո ներկա,
Գալիք քո մութ, անցյալ անհուշ,
Բայց ապրում ես դու, շնչում ես, դեռ կաս:

Երկու փաստանյալ ու մի քիչ էլ անց
Թանկ են դեմքին քո դառուկ,
Մի բաժակ ջուր, մի կորո հաց,
Հիմարում ես հար օրերին անգութ:

Դու մտնուկ ես դեմ՝ մտնուկ հավիտյան,
Միամիտ սապեղ պայքարներում խենթ,
Անցողիկ կյանքի կենցաղում ունայն
Դու երազանքների գերին ես հավեր:

Չրացես աչքերդ, չնայես հեռուն,
Չվարարանես հոգիդ պանծալի,
Մի ակնթարթ է երազը խնորուն,
Եվ ակնթարթն այդ իմաստը եւ կյանքիդ:



Բանաստեղծական երախայրիքը

ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ

Վալեն (Վահե Ստեփանյան) ծնվել է 1988-ին, 1995-2002թթ. ապրել է արտերկրում, մինչեւ ութերորդ դասարանը հասակ է առել եւ սովորել ռուսական միջավայրում: Այնուհետեւ սովորել է Երեւանում, ընդունվել ժողովրդական տնտեսության ինստիտուտը, բայց ուսումը կիսատ է թողել... Վերջին հինգ տարում սկսել է ստեղծագործել, սկզբում քառատողեր էր գրում, նվիրում ընկեր-բարեկամ-հարեւաններին, հետո հերթը հասավ ավելի լուրջ բանաստեղծություններին, որոնք ծնունդ են առել նրա անմիջական աշխարհընկալումից, անկեղծ սիրո խոհերից, մայրական սիրո եւ կարոտի զգացմունքներից: Դրանք ամբողջացվել են մի գրքում, որ «Ապրումներ» քնարական վերնագիրն է կրում: Նաեւ պոեմ գրելու փորձ է արել, ունի ամտիպ բանաստեղծություններ: Ինչեւէ, ներկայացնում ենք երկու բանաստեղծություն նրա անդրանիկ գրքից:

*Աստղերը՝ ոսկեպար, ամպերը՝ արծաթե,
Ես այս գիշեր անկողնում
Զգացել եմ, իբր թե
Էժանագին օդուց
Հոգիս է հարբել:*

*Փողոցները՝ ամառի, ծառերը՝ մերկացած,
Ինձ անդադար թվում է, թե
Պատկած եմ մեռած
Գերեզմանում ուրիշի՝
Կազարում փայրել:*

*Վաղորդայնը՝ կապրաթույր, հավերք՝
զվարթագին,
Թիվ, անուն, ազգանուն
Օգրար մարդու շիրմին,
Ինչ-որ անանուն վարպետ
Ուժ է փվել իր ձիրքին:*

*Արեգակը՝ շողարձակ, երկինքը՝
կապրաթինե,
Էլ օդում էժանագին
Չեմ հարցնի ոչինչ,
Ես ցավերս մոլեգին
Կրանեմ անձիչ...*

*Տխրո՛ւ... խոր ու խիտ մշուշ
Իջել է օրերին քո ներկա,
Գալիք քո մութ, անցյալ անհուշ,
Բայց ապրում ես դու, շնչում ես, դեռ կաս:*

*Երկու փաստանյալ ու մի քիչ էլ անց
Թանկ են դեմքին քո դառուկ,
Մի բաժակ ջուր, մի կորո հաց,
Հիմարում ես հար օրերին անգութ:*

*Դու մտնուկ ես դեմ՝ մտնուկ հավիտյան,
Միամիտ սապեղ պայքարներում խենթ,
Անցողիկ կյանքի կենցաղում ունայն
Դու երազանքների գերին ես հավեր:*

**Հարցազրույցը՝ ԱՐԱՎԻՆ
ՆԱՎԱՍԱՐԳՅԱՆԻ**

ՆՇԱՆԱՎՈՐ ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Ի՞նչն է օր թո՛ւմ անձնա՞մարման
 Բանասեր, հայագետ-արեւելագետ,
 թարգմանիչ, ՀԽՍՀ գիտության
 վաստակավոր գործիչ,
 ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը ծնվել է
 Մեղրու Կալեր գյուղում 1893թ.
 փետրվարի 20-ին: Նախնական
 կրթությունը ստացել է Գանձակի
 տղայոց գիմնազիայում: 1913-ին
 ընդունվել է Մոսկվայի Լազարյան
 ճեմարանը, որի պրոֆեսորադաս-
 ասխոսական խորհրդի որոշմամբ
 գործուղվել է ռուսալեզու Բեռլինի
 համալսարանում՝ որպես ազատ
 ունկնդիր: 1920-ին վերադար-
 ձել է Հայաստան եւ պրոֆեսորի
 պաշտոնով ծավալել գիտաման-
 կավարժական գործունեություն:
 Մեծանուն հայագետ Մանուկ
 Աբեղյանի հետ իրականացրել է
 «Սասնա ծռեր» էպոսի գիտա-
 կան հրատարակությունը: Գրի է
 առել «Սասնա ծռեր» էպոսի ութ,
 ռուսերեն թարգմանել՝ տասը պա-
 տում: Նրա գրչի են պատկանում
 գիտաբանասիրական մեծածառ
 աշխատություններ: Ստալինյան
 հավածանքների տարիներին
 հանդիպել բռնադատվել է, հետո
 արդարացվել է: Նրա ուշագրավ
 հոդվածներից է «Ձ. Բունիաթովի
 գրական-պատմական հայեցա-
 կարգը»՝ հրատարակված 1968թ.,
 որը ներկայացնում ենք ստորև:



Ձիա Բունիաթովի գրական-պատմական հայեցակարգը

Ձիա Բունիաթովի պատմական հայեցակարգը կարմիր թելի պես անցնում է նրա «Աղբյուրները VIII-IX դդ.» աշխատությունում, որը հրատարակել է Աղբյուրագետական խՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը՝ Ձ.Յամպուլսկու խմբագրությամբ (Բաքու, 1965թ.): Այս ուսումնասիրությանը բնորոշ է միտումնավորությունը, որը բացառում է հայ ժողովրդի որևէ դրական դեր, նրա մշակույթը Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների պատմական ճակատագրում, մասնավորապես՝ Աղվանքի, եւ կասկածի տակ դնում հայ ժողովրդի պատմական գոյությունը որոշակի տարածքում: Հեղինակի կարծիքով՝ այդ ամենը պատմական գիտության միաստիճիկացիա է, քանզի այն երկիրը, որը հետագայում բնակեցվել է հայերով, ի սկզբանե պատկանել է աղվաններին, որոնք մասամբ հայացել են՝ ընդունելով հայ գրիգորյանական հավատը՝ միաբնակությունը (եվտիպեսականություն, մոնոֆիսիտիզմ), իսկ մեծ մասն իսլամացվելով հետագայում թուրքացել է: Աղվանների քրիստոնեացումը (հայացում) եւ իսլամացումը (թուրքացումը) տարվել է տրամագծորեն հակառակ մեթոդներով: Հայացումը կատարվել է բռնի կերպով, ընդ որում, հայ հոգեւորականությունը խիստ միջոցներ է կիրառել եւ «արաբական իշխանությունների ձեռքով ոչնչացրել է»(1), իսկ իսլամացումը՝ կամավոր՝ որպես փրկություն ստրկացնող-ու-

ծացնող հայերից(2): Այսպիսին է Ձ.Բունիաթովի եւ նրա գրքի խմբագիր Ձ.Յամպուլսկու պատմագիտական հայեցակարգը հայ-աղվանական հարաբերությունների մեկնաբանության հարցում: Գրքի հեղինակի եւ խմբագրի ուսումնասիրության մեթոդների եւ պատմագիտական հայեցակարգի մասին դեռ կարտահայտվեն խորհրդային պատմաբանները(3): Մենք կուզենայինք համառոտ անդրադառնալ դրանց պատմա-լեզվաբանական (լոկ Աղվանքի բնակչության էթնոգենեզի կտրվածքով) եւ պատմագրական հայեցակարգին: Ալբանիայի էթնոգենեզով շատ է զբաղվել Ձ.Յամպուլսկին՝ Ձ.Բունիաթովի խմբագիրն ու խորհրդատուն, ով անգամ հատուկ աշխատություն է գրել՝ նվիրված այդ հիմնախնդրին («Հին Կովկասյան Ալբանիայի պատմության էջերից. Ալբանիայի բնակչության էթնոգենեզը»): Ի՞նչ միտք է զարգացնում Յամպուլսկին Ալբանիայի բնակչության էթնոգենեզի կապակցությամբ: Նա տվյալ հիմնախնդիրը դիտարկում է հաբեթաբանության դիրքերից: «Այդ առնչությամբ, - ասում է նա, - միտք է ծագում «մարերի» հաբեթական կերպարի եւ նրանց էթնիկական կապերի մասին ոչ թե առասպելական «արիացիների» ալիքների հետ, որոնք արտացոլում են սուկ XIX-XX դարերի կապիտալիստական էքսպանսիան (?- 4. Մ.-Օ.), այլ հին կովկասյան Ալբանիայի, Հայաստանի, Իբերիայի եւ ներկայիս Դաղստանի հաբեթական ցեղերի հետ» (էջ 35):

Իր՝ «մարերի» հաբեթական կերպարի մասին մտքի բանական հիմնավորման համար նա երկար տարիներ «տեղանվանական նյութ է հավաքել»՝ չնոռանալով, որ դրա զգալի մասը կարող է ժամանակակից ծագում ունենալ՝ կապված ճոր իմաստավորման հետ: «Ընդ որում, անվիճելի մոր անունները («Մարալգե») «Մարիենֆելդ» եւ այլն) եւ բաց են թողել», - ասում է նա: Դիտարկենք այստեղ միայն «մար» խումբը, որ չնայած ընկ. Հարությունյանի նախագուշացումներին, 100 անվանում ունի, ընդ որում նա (Ձ.Յամպուլսկին) կամայականորեն խեղաթյուրում է, անտեղյակությամբ տարանջատում տվյալ անվանումը, որպեսզի ամեն գնով առանձնացնի «մար» արմատը: Այսպես, օրինակ՝ Մար-ալու, Մար-ալըղ (փոխանակ՝ Մարալ-ու, Մարալ (լ) ըղ), Մար-ալգամի (փոխանակ՝ Մարալ-գամի), Մար-ալիան (փոխանակ՝ Մարալ-ի-ան), Մար-ջան Մար-ջանի, Մար-ջանլի, Մար-ջանլու, Մար-ջանլիսկոյե (?), (փոխանակ՝ Մարջան, Մարջան-ի, Մարջան-լի, Մարջան-լու, Մարջան-լիսկոյե), Մար-դակերտ (փոխանակ՝ Մարդ-ա-կերտ՝ մաքուր հայերեն բառաբարդում), կամ Մար-գիգի, Մար-գիգի (փոխանակ՝ Մարգ-ի գիգ, Մարգ-գիգ): Իսկ ամենամանրախնդիր Ձ.Յամպուլսկու՝ որպես գիտնականի համար տեղանվանական ենթախմբից բերված այն օրինակն է, որը կապված իմաստով կուսակցական եւ պետական գործիչ Ա.Ֆ.Մյասնիկյանի՝ նույն ինքը Մարտունու կեղծանվան հետ:

Այդ կեղծանունը Ձ.Յամպուլսկին մասնատել է այսպես՝ Մար-տունի, Մար-տունաշեն, որպեսզի այդ կեղծանվան մեջ հայտնաբերի «մարերի»: Այդ մեթոդայությամբ դժվար է ամենուրեք «մարեր» ձեռք բերել: Օրինակ՝ Մարաշ, Մարդին, Մարմարա, Մարմարիս (Թուրքիա), Մարսել, Մարբուրգ, մարբիզ, իսկ այս ամենը միասին դիտարկելով եւ, mar-taval, ինչը ռուսերեն նշանակում է անհեթեթություն, հիմարություն: Եթե սա գիտություն է, ապա ինչպիսի՞ն է կեղծ գիտությունը: Անդրադառնալով այժմ Ձ.Բունիաթովի եւ նրա խմբագրի այն պատմագրական հարցերին վերաբերող դատողություններին, որոնք շոշափված են նրանց գրքում: Ի՞նչն է այս կամ այն արձակագրին կամ բանաստեղծին, պատմաբանին կամ գիտնականին, ասենք՝ մաթեմատիկոսին կամ բժշկին, այս կամ այն ազգային հոգեւոր մշակույթում օրինականացնելու ճշմարիտ հիմնավորումը, անխախտ սկզբունքը: Գրքի հեղինակն ու խմբագիրը խուսանվում են այնպես, ինչպես ծեղանուն է իրենց: Անհրաժեշտության դեպքում իրենց նկրտումներն արդարացնելու համար նրանք կարող են մերժել լեզուն, որ ստեղծագործության եւ դրա հեղինակի բնորոշ հայտանիշն է, անտեսել հեղինակի գաղափարախոսությունը, որ զարգացնում է նա ստեղծագործության մեջ, իրական կյանքի պատկերումը, որում բախվում են տրամագծորեն հակադիր դասակարգային եւ դասային շահեր, եւ փոխարենը, որպես ազգային պատկանելության որոշման առաջնություն, առաջ քաշել լոկ գրողի հայրենիքը՝ ծննդավայրը: Այս «հիմնավորումներից» յուրաքանչյուրը համապատասխանաբար բացառում է մյուսը: Այսպես, եթե որպես հիմք ընդունենք տեղի հայտանշանը՝ գրողի հայրենիքը, ապա հեշտությամբ դեն է նետվում լեզուն, ստեղծագործության գաղափարախոսությունը եւ այլն: Եթե անգամ գրողը մի քանի ստեղծագործություն ունի, ասենք՝ հայերեն, ոչ թե աղվաներեն, միեւնույն է, այդ հեղինակին վերագրում են այն երկրին, որտեղ նա ծնվել է: Եվ այստեղ ահա առաջ է գալիս թե՛ տվյալ գրողի ժողովրդի, թե՛ նրա ու նրա աշխատությունների բռնի ուժեղացում, հայացման մի ամբողջ «տեսություն»:

Այդ «տեսություն» օգնությամբ պատմաբան Ձ.Բունիաթովն առաջ է քաշում եւ եռանդով պաշտպանում ոչ պակաս անհեթեթ մի թեզ, այն է՝ իր հավանած տարածքի բնակչության ստեղծած ամբողջ հոգեւոր մշակույթը հայալեզու է, բայց ազգային պատկանելությամբ՝ ոչ հայկական: Այդ ուրույն, ապշեցուցիչ թեզը միտումնավոր առաջ է քաշվում ու զարգանում վերոհիշյալ գրքի առաջին «Աղբյուրների եւ գրականության տեսություն» գլխում (էջ 6 եւ հաջորդները): Այսպես, թվարկելով Աղվանք-Արանի պատմության արքայությունը, Ձ.Բունիաթովը գրում է, որ բացի արաբական արքայությունից, «Աղբյուրների պատմության արքայությունը եւ ծառայում վրաց, բյուզանդական եւ հայալեզու հեղինակների գրվածքները»: Մեր ընդգծած եզրույթը ցույց է տալիս պատմաբաններ Ձ.Բունիաթովի եւ Ձ. Յամպուլսկու ակնհայտ միտումնավորությունը: Այդ եզրույթը նորամուծություն է հայագիտության մեջ, իսկ դրա հեղինակները դուրս տոր Ձիա Բունիաթովը եւ նրա գրքի խմբագիր Ձ.Յամպուլսկին են, ովքեր անտեղյակ են, որ հայ մատենագրության մեջ մինչեւ XIII դարը (նրանց հետաքրքրող շրջանում) գրեթե հայերեն գրող օտարազգիներ չեն եղել, մինչդեռ հայերը աշխատություններ են գրել նաեւ այլ լեզուներով (օրինակ՝ հունարեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն, ղիչաղերեն եւն): Եթե Ձ.Բունիաթովն ավելի հետևողական լիներ, կգրեր «արաբալեզու» (քանզի արաբերեն են գրել եւ պարսիկները, եւ հայերը, եւ սիրիացիները եւ այլք), ոչ թե բյուզանդացի, այլ «հունալեզու» (քանզի բյուզանդացիների լեզու չկա, իսկ հունարեն գրել են եւ հայերը, եւ վրացիները, եւ սիրիացիները, եւ արաբները եւ այլք) եւ «հայկական» աղբյուրներ: «Հայալեզու աղբյուրներ» եզրույթը բազմիցս կրկնվում է մինչեւ գրքի վերջը: Հայկական աղբյուրների նման ոչ գիտական բնորոշմամբ («հայալեզու») հանդերձ՝ Ձ.Բունիաթովը հպանցիկ անդրադառնում է հայ պատմագիրներին՝ համարելով նրանց օժանդակ եւ քիչ կարևոր, մինչդեռ հայ պատմագիրների աշխատությունները հիմնական աղբյուր են համարվում նաեւ Վրաստանի եւ Աղվանքի պատմության համար՝ մինչեւ VIII-IX դդ. ներառյալ: Ըստ Ձ.Բունիաթովի՝ Աղբյուրների մինչեւ VII-IXդդ. պատմության հիմնական աղբյուրներն արաբականներն են, որոնցից հնագույնները, օրինակ՝ Բալազորին, Թաբարին եւ մյուսները IX-X դարերից են: Հետեւաբար՝ նրանցից ոչ ոք Հայաստանում, Վրաստանում եւ Աղվանքում մինչեւ IX դար եղած իրադարձությունների վկան ու ակնմատեն չի եղել: Նման կանխակալ վերաբերմունքն այդ ժամանակաշրջանին եւ այդ շրջանների այսպես կոչված հայալեզու աղբյուրների գնահատմանը ոչ մի կերպ չի կարելի պատմաբան Ձ. Բունիաթովի գիտական օբյեկտիվության ցուցանիշ համարել: Նրա կարծիքով՝ եթե «հայալեզու» պատմագիրների շարքում կան պատմագիրներ, ովքեր որոշ ուշադրության են արժանի, ապա նրանք չեն պատկանում հայ ժողովրդին, այլ՝ աղվան, հետեւաբար՝ աղբյուրներից, այլ խոսքով՝ թյուրք ժողովրդին: Զե՛ղ որ արագ ընդհանրացումներ անող պատմաբան Ձ. Բունիաթովի եւ նրա խմբագիր Ձ. Յամպուլսկու տեսության ու տերմինաբանության համաձայն՝ թյուրքերն արվանների հոգեւոր մշակույթի եւ մատենագրության միակ ժառանգորդներն են: «Էթնիկական ընդհանրությունը, - ասում է նա գրախոսվող գրքի առաջաբանում, - որը դարձել է արաբալեզու անվան կրողը», աշխատությունում անվանված է ընդհանուր պայմանական «թյուրքեր» տերմինով(էջ 4): Ի՞նչ մատենագրության, ի՞նչ պատմագիտական աշխատությունների մասին է այստեղ խոսքը: Զե՛ղ որ մինչ օրս գիտությունն արվանական լեզվով գեթ մեկ պատմական կամ այլ բովանդակության գրական հուշարձան չի հայտնաբերել: Գուցե դա գաղտնիք է, որ այնքան զգուշությամբ ու աշխուրջությամբ պահպանում են մեր հեղինակն ու նրա մենտոր-խմբագիրը: Ոչ, նրանք, ավաղ, ոչ մի նշանակալի բան չուներ, որով կարողանային ուրախացնել համաշխարհային գիտությանը: Իսկ ինչքան ուրախ կլինեինք մենք՝ շարքային՝ գիտաշխատողներս, նման հայտնագործության համար, ի՞նչ նպատակ կբերեին նրանք համաշխարհային գիտության գանձարանին՝ հրապարակելով նման հուշարձաններ կամ թեկուզ՝ Մովսես Կաղանկատվացու կամ Մովսես Դավիթբեկյանի «Աղվանից աշխարհի պատմության» բնագիրն արվաններին: Սակայն դա չի հուզում կամ քիչ է հետաքրքրում մեր պատմաբանին՝ ուրիշների մտքերի հավաքողին: Բավական է եւ այն, որ նա կողմնակի օգնությամբ հավաքել է այսքան բազմաբնույթ նյութեր: Ուսումնասիրող Ձ.Բունի

ՆՇԱՆԱԿՈՐ ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԶՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Երկր գրված գրական ստեղծագործություններն ալքանական գրականության հուշարձանների շարքը դասելու մասին ամպագոռգոռ հայտարարությամբ:

Մենք սխալ չենք թույլ տա՝ ենթադրելով, որ տվյալ գործում մասնակցություն է ունեցել վերոհիշյալ Տեր-Գրիգորյանը:

- Գյանջան, - գրում է նա, - նույն ժամանակաշրջանի (XII-XIIIդդ. Կ. Մ.-Օ.) պատմագիրների և մտածողների՝ Մխիթար Գոշի՝ նշանավոր հայկական դատաստանագրքի հեղինակի, պատմիչների [Կիրակոսի և] Վարդանի և նույն դարաշրջանի գիտնական Զովհաննես Սարկավագի հայրենիքն է(14): Թվարկելով մի շարք նշանավոր մարդկանց՝ նա չի մոռանում ավելացնել, որ նրանք Գյանջայից են եղել, «որտեղից նաեւ են են», - թարգմանում է Կիրակոսի պատմությունը Տ.Տեր-Գրիգորյանը(15):

Իմ ընդգծած բառերը ցույց են տալիս, թե ինչքան ապաշնորհ է կեղծում նա Կիրակոսի բնագիրը, եւ ինչպես են Ջ.Բունիաթովը և Ջ.Յամպուլսկին անտեղյակությամբ կառույցում այդ կեղծիքից:

Արդյոք Կիրակոսն իրո՞ք վկայում է, որ ինքն էլ եւ իր հետ նաեւ Զովհաննես Սարկավագը ծննդով Գանձակ (Գյանջա) քաղաքից են: Ոչ: Կիրակոսի տեքստը սխալ է փոխարկված ռուսերենի: «Երկուսն էլ եղել են Գանձակ աշխարհից, որտեղից նաեւ են են», այսինքն՝ Կիրակոս Գանձակեցի: Մինչդեռ բնագրում կարդում ենք. «Երեքն էլ Գանձակ աշխարհից են» (երեքը, այսինքն՝ Զովհաննես Սարկավագը, վարդապետ Դավիթը՝ Ալավկա որդին և վարդապետ Գրիգորը՝ Թորակերի որդին՝ տես ռուսերեն թարգմանության ծնթթը. 480, ռուսերեն թարգմանության էջ 63): Դեռեււաբար, այս բոլոր վարդապետները, բացի Մխիթար Գոշից եւ քահանա Արքայությունից, որոնք համարվում են ծննդով Գանձակ քաղաքից, ծագում են ոչ թե քաղաքից, այլ «Գանձակ աշխարհից»: Ասենք՝ ուրիշ հայկական սկզբնաղբյուրներ էլ հաստատում են Կիրակոսի այս վկայությունը(16):

Ոչ անուր հիմքի վրա օրեղեն ամբողջ միայն կկառուցես, եթե հիմքը խախտու է, որպես վրա կառուցված շենքը կփլվի:

- Դետո ինչ, - կառարկի պատմաբան Ջ.Բունիաթովը, - եթե նրանք «Գանձակ քաղաքից» չեն, ուրեմն «Գանձակ երկրից» են, որ գտնվում է Աղվանքի սահմաններում: Ի՞նչ տարբերություն:

Սակայն այստեղ էլ նրա հիմքերը երբեք են, փաստարկները՝ թույլ: «Գանձակ աշխարհ», ըստ IX-XIVդդ. հայկական սկզբնաղբյուրների, նույնանուն է «Փառիսոս աշխարհի» հետ, իսկ այս վերջինը մտնում էր Արցախ մարզի սահմանների մեջ որպես առանձին գավառ՝ կառավարվելով ինքնուրույն թագավորության հարստությամբ՝ Հայկյանների տոհմից: 1003թ., վերջին պակասորդներ Սենեքերիմի և Գրիգորի մահից հետո նրանց երկիրը բաժանեցին իրար մեջ հայոց Գագիկ I թագավորը և Գանձակի Եմիր Փաղուհը, ընդ որում՝ վերջինիս բաժին հասավ արեւելյան դաշտավայրային հատվածը, իսկ հայոց թագավորին՝ բոլոր լեռնային շրջանները՝ Վայոց ձորից հյուսիս-արեւելք, Խաչենը և Փառիսուրը(17) Արեւելյան Հայաստանում:

Բագրատունյաց թագավորության՝ Անի մայրաքաղաքով, եւ Սյունյաց թագավորության անկումից հետո հեռավոր Արեւմուտքում՝ Կիլիկիայում կազմավորվեց անկախ հայկական պետություն, որը գոյություն ունեցավ մինչեւ XIVդ. վերջին քառորդը: Կիլիկյան հայկական պետության հզորացման հետ, որը կա-

ռավարում էին Ռուբինյանները, նաեւ հայոց հայրապետական աթոռն Էջմիածնից տեղափոխվեց Արեւմուտք՝ Կիլիկիա, ուր մնաց մինչեւ վերադարձը Էջմիածին (1441թ.):

Հայ ժողովրդի պատմության կիլիկյան շրջանը նշանավորվեց Հայ առաքելական եկեղեցու հետ կաթոլիկ և ուղղափառ դիոֆիստական եկեղեցիների տեսական բանակցություններով՝ հայ եկեղեցու՝ իր արեւմտյան քույր եկեղեցիների հետ միավորվելու հարցի շուրջ: Արեւմտյան՝ կիլիկյան հայ եկեղեցու դիրքորոշումը վրդովմունքի փոթորիկ բարձրացրեց Արեւելքում: Համառու տեսական պայքար սկսվեց: Այդ ամուրջը պայքարում միավորման վճռական հակառակորդները Արեւելյան Հայաստանի ներկայացուցիչներն էին, «կողմանք Արեւելից», «երկիրն Արեւելից» կամ «Միջմաշխարհի» (այսինքն՝ Հայաստանի) կամ «աշխարհի Գանձակի», «աշխարհի Փառիսոսի» եւ այլն:

Այսպես էին հայ հասարակական-քաղաքական գործիչները, գրող-պատմիչները և աստվածաբանները, ի հակակշիռ «Արեւմտյան երկրի», «Սեւա կյան կոչված երկրի» կամ Կիլիկյան հայկական պետության, անվանում Արեւելյան Հայաստանը, որով նկատի էին ունենում, մասնավորապես, այն երկիրը, որը Ջաքարյան տոհմի հայ իշխանների տիրապետության տակ էր, որի մեջ մտնում էին Անին, Սանահինը, Հաղպատը և հարեւան շրջանները, ինչպես նաեւ Ջաքարյաններից անկախ մարզերը կամ Արցախ և Սյունիք աշխարհները:

Այդ Արեւելյան Հայաստանում, ներառյալ և «Գանձակի մարզի» հարավարեւմտյան հատվածը, այսինքն՝ «Փառիսոսը», հայ-վրացական բարեկամությամբ ստեղծված համեմատաբար խաղաղ պայմանների շնորհիվ սկսեց զարգանալ հայկական հարուստ մշակույթը: Հին և նոր կառուցված տաճարներում, վանքերում ու մենաստաններում բուռն կերպով ծավալվում են վանական դպրանոցները, վարդապետարանները, համալսարանները և ճեմարանները, որտեղ, բացի եկեղեցական կադրեր պատրաստելուց, ծաղկում էին գիտությունն ու գրականությունը: Սանահինը և Հաղպատը, Նորգետնիկն և Խորանաշատը, Հաղարծինն ու Կեչառիսը, Հավուց թառն ու Այրիվանքը, «արժանափառ Անին» և շատ ուրիշ քաղաքներ ու վանքեր, դպրոցներ ու գիտության տաճարներ հայ անջատ-անջատ ու մասնատված մշակույթի խոշոր կենտրոններ են դառնում, որոնցում, չնայած բավական ծանր պայմաններին, փայլատակում են հայ ժողովրդի ստեղծարար ոգու կայծերը:

XII. երկրորդ կեսից մինչեւ XIIIդ. հայ մշակույթի ամխոնը գործիչների շարքում թե՛ քանակով, թե՛ որակավորումով առանձնանում են «Գանձակեցի», «Փառիսոսցի», «Գետիկցի» «Արեւելցի» մականուններով գրական-գիտական, եկեղեցա-հասարակական, մանկավարժական գործիչները, մի խոսքով՝ նրանք, ովքեր ծննդով «Գանձակ աշխարհից» էին, «Արեւելքի կողմերից», «Փառիսոսի երկրից» կամ «Սյունիքից», այսինքն՝ բուն Արեւելյան Հայաստանի մարզերից, որտեղ երկրի բնիկ բնակչությունը՝ հայ ժողովուրդը, ստեղծարար աշխատանքով նյութական ու հոգեւոր բարիքներ էր ստեղծում: Հիշենք նրանցից թեկուզ Գեորգ վարդապետ Արչացուն (կամ Ուրցացուն), նրա սաներ Զովհաննես Սարկավագ վարդապետին, վարդապետ Դավիթ Ալավկա որդուն, վարդապետ Գրիգոր Թորակերի որդուն՝ Զովհաննես Սարկավագի աշակերտին, Զովհաննես Տավուշեցուն, վերջինիս սան Մխիթար Գոշին, նրա աշակերտներ

վարդապետ Մարտիրոսին, Զովհաննես Արմանեցուն, Վանականին, վերջինիս սաներ վարդապետներ Կիրակոսին և Վարդանին, Գրիգորին և Պողոսին. Մարկոսին և Սոստանեսին և շատ ուրիշներին(18): Իսկ ինչքան նման խոշոր գիտագրական, եկեղեցական և հասարակական գործիչներ են պատրաստվել Անիի, Հաղպատի, Սանահինի, Տաթևի, Գլածորի համալսարաններում և Արեւելյան Հայաստանի այլ ակադեմիական ու մշակութային կենտրոններում:

Զմայապաշարված ընթերցողը, կարդալով այդ հայ գրողների անունները՝ ծննդով Արեւելյան Հայաստանից, մասնավորապես՝ «Գանձակ աշխարհից» եւ pars pro toto (ամբողջի մասը-ծան. թարգմ) «Փառիսոսի աշխարհից», կասի, որ նրանք ծննդով այն երկրից կամ մարզից են, որտեղ գերակշռում են հայերը, այդ գրողների ազգակիցները: Եվ, իսկապես, այդ շրջանները մտնում էին Արչակունի, Բագրատունի թագավորության, Սյունիքի, ավելի ուշ Ջաքարյան Հայաստանի սահմանների մեջ:

Ջ.Բունիաթովը և նրա խմբագիր Ջ.Յամպուլսկին, սակայն, չնախապաշարված մարդկանց շարքից չեն: Նրանք իրենց մտեցումն ունեն, իրենց վերաբերմունքն այն ամենին, ինչն առնչություն ունի հայերին և հայ մշակույթին, սակայն՝ հազարամյա վաղեմության: Բավական է նայել Անդրկովկասի VIII-Xդդ.՝ նրանց կազմած քարտեզին: Խոշորացույցով կամ լայտերով պետք է փնտրել այն հողակտորը, որը բնակվել էին հայերը: Այդ ամենի մասին իրենց ծանրակշիռ խոսքը կասեն Հայաստանի պատմաբանները, իսկ մենք սահմանափակվենք միայն բանասիրական կարգի հարցերով և ոչ բոլոր բաժիններով:

Մենք չենք անդրադառնալ «Գանձակ աշխարհի» կամ «Գանձակ քաղաքի» և կամ «Փառիսոս երկրի», «Արեւելյան երկրի» բոլոր գրողներին, այլ միայն երկուսին՝ Մխիթար Գոշին և Կիրակոս Գանձակեցուն:

Մխիթար Գոշին՝ «Դատաստանագրքի» հեղինակին, մենք հպանցիկ անդրադարձանք Ջ.Բունիաթովի և Ջ. Յամպուլսկու հավակնոտ փաստարկները ճշտելիս և հերքելիս, որոնցով նրանք ձգտում են ժխտել Գոշի հայկական ծագումը և օրինականացնել նրան աղվանական մշակույթի շրջանակում: Հարկ է, սակայն, ստուգել՝ իրո՞ք այդպես է, կամ արդյո՞ք հիշյալ պատմաբանների բոլոր փաստարկներն են երեւակայության պտուղ: Իսկ գուցե Մխիթար Գոշը որեւէ կապ չունի՝ հայ ժողովրդի, նրա մշակույթի հետ, և մենք իզուր ենք նրան վերագրել հայկական ծագումը:

Ըստ հայկական պատմագիտական սկզբնաղբյուրների՝ Մխիթար Գոշը ծննդով «Գանձակ քաղաքից» է, քրիստոնյա ծնողների որդի: Կրթությունը Արեւելյան Հայաստանում և Կիլիկիայում ավարտելուց հետո երկու անգամ արժանացել է «վարդապետ» գիտական աստիճանի, համբավ է ձեռք բերել երկրում և դարձել ամենահեղինակավոր վարդապետ Արեւելյան Հայաստանում: Իր անձնական որակներով, լայն կրթությամբ և խոր իմացությամբ գիտությունների ոլորտում և հայ առաքելական ուսմունքում առանձնացել է մյուս վարդապետներից և դարձել ամիրապատալար Ջաքարեի հոգեւոր հայրը, ով այն առաքելական էր: Ոչինչ չէր կարող տեղի ունենալ հայ եկեղեցու ներսում և հայերի հասարակական կյանքում առանց նրա գիտության ու համաձայնության: Ամենակարող Ջաքարեի որեւէ առաջարկ առանց Մխիթարի հավանության չի ընդունվել

հայ եկեղեցու ժողովում (nota bene [լավ հիշեք-ծան. թարգմ.]): «Անկառնելի է մեզ համար առանց մեծ վարդապետի կատարել դա»(19), - հայտարարում է եկեղեցական ժողովը՝ գումարված մայրաքաղաք Անիում: Սյուն կողմից՝ Մխիթարի ներկայությունը Ջաքարեի համար վճռական նշանակություն է ունեցել հոգեւոր մշակույթի ուղղությամբ իր ձեռնարկումներում: «Քանի որ եկել ես, - ասում է Ջաքարեի Մխիթարին, - արդեն նրանք (այսինքն՝ եկեղեցական ժողովը՝ բոլոր վարդապետներով, եպիսկոպոսներով և ն. Մ. - Օ.) ինձ պետք չեն» (20) :

Սակայն դա դեռ չի նշանակում, որ Մխիթարն ամիրապատալար Ջաքարեի կամքով կարող էր ուսնահարել հայ եկեղեցու կանոնները, դոգմաներն ու ավանդույթները: Այդ հարցերում Մխիթարը շարքային ուղղափառ վարդապետ է եւ պահպանողական հայացքների տեր: Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն քահանայապետի՝ Ամենայն հայոց կաթողիկոսի և եկեղեցական ժողովների կարծիքները նրա համար վճռական նշանակություն ունեն:

Մխիթարն իր հայրենիքի, իր «հայկյան ժողովրդի» մեծ նվիրյալ է: Իր կյանքի ամբողջ ընթացքում նա էլ գործով, եւ խոսքով պայքար է մղում օտարերկրյա նվաճողների լծից հայրենի ժողովրդի գաղտագրում համար, ուստի ամեն կերպ աջակցում է ամիրապատալար Ջաքարեին, ջանում է թեթեւացնել հայրենակիցների ծանր բեռը, միաժամանակ ուսուցանում Ջաքարեին ու նրա եղբայր Իվանեին, ով ուղղափառություն էր ընդունել՝ երկբնակության հավատք:

Մխիթար Գոշի եռուն հայրենամուտ գործունեության լավագույն վկաները նրա աշակերտներն են՝ վարդապետների, գրողների, աստվածաբանների մի ամբողջ թույլ, ովքեր հայրենակիցների լուսավորության գործում շարունակում էին իրենց ուսուցչի պատգամները, ինչպես նաեւ նրա գիտա-գրական աշխատությունները, առաջին հերթին՝ նրա նշանավոր «Դատաստանագիրքը»:

Որպես մեծ օրենսդիր՝ նա իր դարաշրջանի համար կազմել է բավական մարդասիրական «Դատաստանագիրք», որի ներածության առաջին գլուխը վերնագրել է, ըստ որոշ ձեռագրերի, այսպես. «Դատաստան նրանց, ովքեր չարախոսում են, թե Հայաստանում դատարան չկա»: Թող սա «հուշատետր» լինի, «որպեսզի այն մշտապես ձեռքին ունենալով՝ իրենք էլ հիշեն և ցույց տան այլադավաններին, որ մենք դատ ենք անում գրավոր կանոնագրերով, որպեսզի նրանք լռեն և չկարողանան նախատել մեզ» (21) և «որպեսզի (հավատացյալները) մեզգանում դատարան չլինելու պատճառաբանությամբ չդիմեն այլադավանների դատարան», և նրա համար, որ արմատախիլ անենք մնացած գործելակերպը, «ինչպես եպիսկոպոսներից, վանականներից, քահանաներից, գլխավոր աշխարհականներից և իշխաններից ոմանք խաթարում են արդարադատությունը կողմնակալության, շահախնդրության ու տգիտության պատճառով»(22):

Էլ ի՞նչ պատասխանեք է պետք ապացուցելու համար, որ նա հայ է: Այս ամենը խոսում է այն մտահոգությունների ու հուզմունքների մասին, որոնք այնպես բուռն համակում էին մեծ հայրենասերի ու սրտացավ ուսուցչի՝ վարդապետ Մխիթար Գոշի ողջ էությունը՝ հայրենի հայ ժողովրդի բեռը թեթեւացնելու մասին մտորումներում:

Մխիթար Գոշը գրել է Աղվանքի համառոտ քրոնիկոնը: Գիշտ է: Բայց

մի՞թե պետք է այդ ստեղծագործությունը համարել «զգալի չափով ալքանական գրականության հուշարձան» գրված գրաբարով: Այդ տրամաբանությամբ բոլոր հայկական գրական հուշարձանները (Զովհաննես Սարկավագ, Վանական, Կիրակոս, Գրիգոր Ալևնացի (Մաղաքիա աբեղա), Վարդան Արեւելցի, Աբրահամ Կրետացի, Թովմա Մեծուփեցի, Սիմեոն Երեսանցի և շատ ուրիշներ)՝ գրված էին հայերենով (պետք է գրել հստակ, պարզ, ոչ թե գրաբարով, ինչպես անում է հեղինակը՝ իմանալով, որ ամեն ընթերցող չէ, որ գիտի, թե ինչ է նշանակում գրաբար), զգալի չափով պետք է համարվեն աղվանական, մոնղոլական, պարսկական, թաթարական և այլ գրականությունների հուշարձաններ: Զէ՞ որ Մխիթար Գոշը գրել է աղվանական բավական համառոտ քրոնիկոնը, իսկ հիշյալ գրողները՝ ամբողջ գրքեր մոնղոլների, պարսիկների, թաթարների և այլոց մասին:

Ջ.Բունիաթովի գրքի առակը ցուցանե, որ պատմաբանը պետք է գրի միայն իր ժողովրդի մասին, այլապես նա կհավաքագրվի այն ժողովրդի գրականություն, որի մասին է գրել իր պատմագրական աշխատությունում:

Մխիթար Գոշի գրչին են պատկանում նաեւ երկուսուկես հարյուր կանկներ, որոնցում նա այլաբանորեն զարգացնում է նույն մարդասիրական գաղափարները բարու, ազնվության, արդարության, հավատարմության, պորտաբույծների դեմ պայքարի և այլնի մասին: Այդ առակները որոշ չափով լուսացնում ու պարզաբանում են «Դատաստանագիրքի» կազմման որոշ մանրամասներ, հնարքներ ու մեթոդներ:

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», առակները և այլ փոքր ստեղծագործությունները կամ հատվածաբար պահպանված երկերը, կրկնում են, գրված են հին գրական հայերենով՝ գրաբարով՝ այն դարաշրջանի եկեղեցու և հայ հասարակայնության պաշտոնական լեզվով:

Ավաճածից հետո էլ ի՞նչ կարելի է ավելացնել, որպեսզի «թերահավատ թովմասները» հավատան, խելքի գան:

Մխիթար Գոշը եւ անունով (Մխիթար՝ սփոփող, այս անունը գործածական է եղել միայն հայերի մեջ), եւ մականունով (Գոշ՝ նոսր մորուքով) հայ է(23), ասենք ինքն էլ իրեն տոհմիկ հայ է համարում, գրել է իր ժամանակի հայոց լեզվով, գրել է իր խոստովանությամբ՝ «հայկազնեայցս» համար, այսինքն՝ հայերի: Նա մեծ հայրենասեր է, հայոց հողի մարդասեր, չգերազանցված հայ դավաբանաբան, մանկավարժ, իրավագետ ու հայ ժողովրդի օրենսդիր, հեղինակություն ոչ միայն Արեւելյան Հայաստանում, այլեւ Արեւմտյան Հայաստանում և Կիլիկիայի հայկական պետությունում՝ եվ հանկարծ այս ամենն այնքան համարձակ վիճարկում է դոկտոր Ջ.Բունիաթովը:

Մխիթար Գոշի ճակատագիրը, ինչպես վերը ցույց տվեցինք, վիճակվել է նաեւ նրա կրտսեր ժամանակակիցն՝ նրա սան, վանական վարդապետի աշակերտ Կիրակոս «Գանձակեցուն»: Մականունը պայմանական է, քանի որ ձեռագրերում ոչ մի տեղ գրված չէ «Գանձակեցի», և այն առկա չէ որեւէ հին կենսամատենագիտական ցանկում: Այդ անվանումը Կիրակոս պատմագիրն վերագրվել է նրա «Պատմության» առաջին հրատարակչի՝ Ոսկան Տեր-Զովհաննիսյանի թյուրիմացությամբ (Մովսվա, 1858թ.): Գրքի այդ վերնագիրն էլ ավանդաբար, բայց իմ կողմից պահպանվել է նաեւ Երեսանի 1961թ. քննական հրատարակությունը՝

ՆՇԱՆԱՎՈՐ ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Զիա Բունիարթովի գրական-պատմական հայեցակարգը

Սկզբը՝ էջ 13

նուն (տե՛ս քննական հրատարակության առաջաբանը, էջ L-30):

Այստեղ մենք չենք անդրադառնա Զ.Բունիարթովի եւ նրա խմբագրի այդ անհիմն պահանջին, որոնց ամսի-ջական պաշտպանը «Պատմության» թարգմանիչ Ս.Տեր-Գրիգորյանն է, ով խեղաթյուրել է հին հայ գրականության ամենապարզ ու բավական լավ պահպանված բնագրերից մեկը: Խեղաթյուրումներ եւ անհասկանալի դարձվածքներ ու նախադասություններ այդ չարաբաստիկ թարգմանիչը շատ ունի, դրանցից մեկի մասին վերը խոսեցինք: Կիրակոսը ծնողով ոչ թե «Գանձակ քաղաքից» է, այլ «Գանձակ աշխարհից», այսինքն՝ «Փառիստից»(24):

Ս.Տեր-Գրիգորյանը եւ նրան հետևող Զ. Բունիարթովն ու նրա գրքի խմբագիրը եռանդով նետվել են դեպի այդ խայծը եւ Կիրակոսին հայտարարել «Իր հայրենի քաղաքի մեծ նվիրյալ»... Կիրակոսն այն անվանումն է «մեծ, նշանավոր Գանձակ քաղաք» (թարգմանությունը ճշգրիտ չէ)(25): Այդպես է: Բայց ինչպե՛ս է նա արտահայտվում այդ քաղաքի մասին, որի «մեծ նվիրյալն» են համարում նրանք (Ս.Տեր-Գրիգորյանը եւ Զ.Բունիարթովը) քրիստոնյա վարդապետ Կիրակոսին. «Սա (այսինքն՝ Գանձակ քաղաքը) Քրիստոսի եւ նրան պաշտողների սարսափելի թշնամի էր, խաչի եւ եկեղեցու անարգիչ ու հայրիոյի էր, քահանաների ու հոգևոր սպասավորների այապահ ու նախատիչ: Երբ լցվեց նրանց մեղքերի չափը, այդ պատճառով նրանց չարության աղաղակը հասավ տիրոջը: Երեսացին սրա ավերման նախնական նշանները»(26): Եվ քաղաքն անայի է մնում չորս տարի: Միայն թե «իր հայրենի Գանձակ քաղաքի ինչպիսի մեծ հայրենասեր» է վարդապետ Կիրակոս Գանձակեցին: Ի դեպ, որտեղի՞ց են Զ.Բունիարթովի տեղեկություններն այն մասին, որ Կիրակոսն ապրել է Գանձակում: Նման տեղեկություն չկա նրա «Պատմությունում»:

Կիրակոս «Գանձակեցին» իրեն համարում է տոհմիկ հայ: Նա դա բազմիցս է հայտարարում աշխատության սկզբում եւ այնուհետեւ մինչեւ աշխատության վերջը. «մեր հայոց ազգը (ցեղը)», «մեր հայոց աշխարհը», «վանն ազգին նետողաց եւ ավերման աշխարհիս Հայոց» (27) եւ այլն:

Իր գրքում նա, ընդհակառակը, երբեք չի գրում «մեր աղվան ժողովուրդը» կամ «մեր աղվանից աշխարհը» եւ այլն: Կիրակոսի «Պատմության» մեջ մի փոքրիկ բաժին կա՝ վերնագրված «Աղվանից կողմերի պատմության համառոտ շարադրանք՝ մեջբերված պատմողաբար»: Այս բաժնում ակնարկ իսկ չկա այն մասին, որ նա ինչ-որ արյունակցական կապ ունի աղվանների հետ, ընդհակառակը, եթե նա անդրադառնում է հայ ժողովրդի հարեւանների պատմական անցյալին եւ ներկային, ապա սոսկ այն պատճառով, որ «թագավորները հնազանդ էին հայոց թագավորներին, նրանց իշխանության տակ էին, եպիսկոպոսները սուրբ Գրիգորից ու նրա աթոռակալներից էին ձեռնարկվում(28), եւ ժողովուրդն ուղղափառությամբ մեզ հետ էր մնում կրոնով (այսինքն՝ Հայ առաքելական կամ մոնոֆիսիտական հավատքին էր-Վ. Մ.-Օ.), այդ պատճառով անհրաժեշտ է, որ երկու ժողովրդի հիշատակումը միասին լինի»(29):

Աղվանների մասին պատումը

Կիրակոսը շարադրում է երրորդ դեմքով:

Միայն ինչպես է ներկայացնում իր «Պատմության» մեջ Կիրակոս Գանձակեցու գրական-գիտական եւ եկեղեցական-քարոզչական գործունեությունը, որ պայմանականորեն հին ձեռագրերում անվանվում է Գեոտիկցի, Արեւելցի եւ Վ.Տեր-Յովհաննիսյանի թեթեւ ձեռքով՝ Գանձակեցի:

Ի՞նչ կասեք դուք՝ քաղաքացի պատմաբաններ Զ. Բունիարթով եւ Զ.Յամպուլսի: Ինչի՞ց է Կիրակոսին՝ այդ խոշոր հասարակական-քաղաքական եւ եկեղեցական գործչին, ուսուցչին եւ Հայ եկեղեցու ակամավոր վարդապետին աղվանացնելու ձեր այդ պատրանքային երազանքը: Ի՞նչ իրական աղբյուրներ են սնում եւ գոտեպնդում ձեզ՝ հայ եկեղեցու վարդապետներին եւ հայ ժողովրդի գիտական-գրական գործիչներին աղվանացնելու պայքարում:

Սույն հոդվածում մենք անդրադարձանք պատմական գիտությունների դոկտոր Զ.Բունիարթովի հիշյալ գրքի, հայկական սկզբնաղբյուրների առնչությամբ, որոնք նա անվանում է «հայալեզու» եւ օժանդակ գրականություն, որը նա հաճախ է օգտագործել առանց նախապես ստուգելու տվյալները սկզբնաղբյուրների հետ: Բայց սա հեղինակի ուսումնասիրության մեթոդի սոսկ ձեւական կողմն է: Բունիարթովն աշխատությունը չի դիմանում ո՛չ գիտամեթոդական, ո՛չ սոցիալ-քաղաքական կտրվածքով: Խորհրդային պատմագիտությունը պետք է ուսումնասիրի Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների բարեկամության ու մշակութային փոխհարաբերությունների սաղմերն ու հետագա զարգացումը, մասնավորապես՝ անդրկովկասյան ժողովուրդների՝ աղվանների, ադրբեջանցիների, հայերի եւ վրացիների: Գիտահետազոտական աշխատանքում այս առումով անհրաժեշտ է թե՛ գիտահետազոտական ծրագրերի կորոզի-նացում, թե՛ ամբողջ Անդրկովկասին վերաբերող խնդիրների համատեղ կազմակերպված ուսումնասիրում: Գիտահետազոտական աշխատանքի մնան պլանավորումը եւ կենսագործումը հրատապ անհրաժեշտություն է խորհրդային հասարակության համար եւ խորհրդային գիտության արմատական խնդիր:

Ստիպված ենք ցավով ափսոսալ, որ Զ. Բունիարթովի «Ադրբեջանը VII-IX դդ.» ուսումնասիրությունը դույզն-ինչ չի կարող նպաստել այդ մեծ գործի զարգացմանը:

Սույն հոդվածի շարվածքը պատրաստ էր, երբ ստացանք «Հ.Ա.Օրբելու աշխատությունների հատընտիր» (Մոսկվա, 1968) ռուսերեն հրատարակության առաջին հատորը:

Հատորի առաջին բաժնում առաջին անգամ հրատարակված է Աղթամարի երկու ճարտարապետական հուշարձանի հիմնարար ուսումնասիրությունը, իսկ երկրորդ բաժնում՝ միջին դարերի հայ առակագիրներին նվիրված ուսումնասիրությունը:

Մխիթար Գոչին վերաբերող սուղ տողերում դատողություններ կան, որոնք բխում են հայերեն բնագրի անստույգ թարգմանությունից, ինչի հետեւանքով տեղ են գտել Գոչի մտքերի ոչ ճիշտ մեկնաբանություններ: Այդ վիճելի եզրահանգումներին մենք կանդրադառնանք «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի հերթական համարում:

Ծանոթագրություն

- 1. Ընդամենը՝ Զ.Բունիարթովը հղում է անուն Մ.Օրմանյանի «Հայ եկեղեցի» (Մոսկվա, 1913) գրքի 45-րդ եւ 118-րդ էջերին, թեպետ գրքի այդ էջերում ակնարկ իսկ չկա այդ մասին: Այդ խոսքերը պատկանում են հենց իրեն՝ Զ. Բունիարթովին (էջ 97) եւ երկրորդ անգամ 99-100-րդ էջերում, երբեմն գալիս է այն եզրակացության, որ աղվանական գրի անհետացման պատճառը «պետք է որոնել գրիգորյանական կաթողիկոսի հակաաբանական քաղաքականության մեջ, որ ի հետեւան ուսուցչությանը եւ ալբանական եկեղեցու բոլոր իրավունքները»: Այլ կարծիք ունի աղվանական գրի անհետացման պատճառի մասին Զ.Բունիարթովի կողմից վկայակոչվող ակադեմիկոս Ա. Շանիձեն, ով ասում է. «Այդ գի-րը շարունակեց իր գոյությունը նաեւ VII դարում արաբների կողմից երկիրը նվաճելուց հետո էլ, ալբանների՝ աստիճանաբար մահմեդականության անցնելու եւ նրանց ապագայ-նացման շրջանում, որ ուժեղացավ X դարից եւ սպառնալից չափերի հասավ մոնղոլական դարաշրջանում»: Տե՛ս Ա.Շանի-ձեի՝ Բունիարթովի (99-րդ էջում) մեջբերած «Կովկասյան պալե-նացիների նորահայտ այբու-բենը եւ դրա նշանակությունը գիտության համար» աշխատու-թյունը (էջ 3): Միավասիկ Ա.Շա-նիձեի հստակ պատասխանն աղվանական գրի անհետաց-ման պատճառի մասին հարցին: 2. Միայն «Ադրբեջանի բնակչության իսլամացումն ու գրիգորյա-նացումը» II գլխի (էջ 86-102) երկրորդ, որում ամեն տեսակ մեջբերումներ են արված այլ գիտնականների աշխատու-թյուններից, ովքեր հաստատում են գրքի հեղինակի պնդումնե-րը: Այդ մեջբերումների շարքում առկա են նաեւ Ա.Ս. Վարդապե-տովի մտքերը, ում աշխատու-թյունները հրապարակված չեն: Ա.Վարդապետովի պնդմանը՝ հայ եկեղեցին բնակեցրել է աշխարհն օտար նվաճողների օգնությամբ եւ «իր ճանապար-հին խաչի նշանի տակ երկ-րի երեսից ջնջել պատմական Աղվանքի ժողովուրդներին, որի մի մասն էլ Ղարաբաղն է (Աղթա-մարը): Հայ եկեղեցին «հնարեն հարմարվում էր իր համար նոր պայմաններին՝ ժառայություն-ներ մատուցելով, նայած քա-ղաքական կոնյունկտուրային, Սեֆյանների, այնուհետեւ՝ ռուս ցարին, այնպես, ինչպես ժամանակին խոնարհվում էր խալիֆաթի, մոնղոլների եւ այ-լոց առջեւ» (էջ 101-102): 3. Ի դեպ, «Տեղեկանքում» նրանք դժգոհություն են հայտնում այն կապակցությամբ, որ գրքի գրա-խոսողները պատմաբան մաս-նագետներ չեն, նրանցից մեկն ընդամենը բանաստեղծ է (Պ. Սեւակ), իսկ մյուսը՝ բանասեր: Ի գիտություն «Տեղեկանքի» հեղինակի. Պարոյր Սեւակն ասեմախոսություն է պաշտ-պանել բանասիրության դոկ-տորի աստիճանի համար, իսկ Ա.Մնացականյանը պատմա-կան գիտությունների դոկտոր է: Եթե գրախոսողը պարտա-վոր է դիպլոմավոր մասնագետ լինել գրախոսվող գրքի գծով,

ապա անհասկանալի է, թե ինչու է պատմաբանը ձեռնամուխ լինում հայ գրականության եւ պատմական-գրական հուշար-ձանների ուսումնասիրությանը՝ գրված հին հայերենով՝ գրա-բարով, չիմանալով ո՛չ ինչ, ո՛չ նոր հայոց լեզուն: Ինքնաքննա-դատությունը մեծ բան է ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ, եւ առավել եւս, գիտության մեջ: 4. Զ. Բունիարթովի այդ պնդու-մը որեւէ քննադատության չի դիմանում: Եթե հայալեզու պատմագիրները «քիչ կարելուր եւ օժանդակ» են, ապա ինչո՞ւ են եղբայրական Վրաստանի եւ Ադրբեջանի գիտաշխատողները թարգմանում դրանք իրենց մայ-րենի լեզվով: 5. Ի դեպ, Կիրակոս Գանձակեցին գրել է «Մովսես Կաղանկա-տուացի պատմագիր Աղուա-նից», ինչը Ս.Տեր-Գրիգորյա-նը թարգմանել է «ալբանացի պատմագիր Մովսես Կաղան-կատվացի» (äëääí ñëëë èñòí ðëë ì ì èñäë Èäëäí èäöóëñëëë), իսկ «Ադրբեջանը VII-IX դդ.» գրքի հեղինակը եւ խմբագիրը որ-սացման շրջանում, որ ուժեղացավ X դարից եւ սպառնալից չափերի հասավ մոնղոլական դարաշրջանում»: Տե՛ս Ա.Շանի-ձեի՝ Բունիարթովի (99-րդ էջում) մեջբերած «Կովկասյան պալե-նացիների նորահայտ այբու-բենը եւ դրա նշանակությունը գիտության համար» աշխատու-թյունը (էջ 3): Միավասիկ Ա.Շա-նիձեի հստակ պատասխանն աղվանական գրի անհետաց-ման պատճառի մասին հարցին: 6. Միայն «Ադրբեջանի բնակչության իսլամացումն ու գրիգորյա-նացումը» II գլխի (էջ 86-102) երկրորդ, որում ամեն տեսակ մեջբերումներ են արված այլ գիտնականների աշխատու-թյուններից, ովքեր հաստատում են գրքի հեղինակի պնդումնե-րը: Այդ մեջբերումների շարքում առկա են նաեւ Ա.Ս. Վարդապե-տովի մտքերը, ում աշխատու-թյունները հրապարակված չեն: Ա.Վարդապետովի պնդմանը՝ հայ եկեղեցին բնակեցրել է աշխարհն օտար նվաճողների օգնությամբ եւ «իր ճանապար-հին խաչի նշանի տակ երկ-րի երեսից ջնջել պատմական Աղվանքի ժողովուրդներին, որի մի մասն էլ Ղարաբաղն է (Աղթա-մարը): Հայ եկեղեցին «հնարեն հարմարվում էր իր համար նոր պայմաններին՝ ժառայություն-ներ մատուցելով, նայած քա-ղաքական կոնյունկտուրային, Սեֆյանների, այնուհետեւ՝ ռուս ցարին, այնպես, ինչպես ժամանակին խոնարհվում էր խալիֆաթի, մոնղոլների եւ այ-լոց առջեւ» (էջ 101-102): 7. Աստվածաշնչից փոխառված է 55 հոդված, այն է՝ Ելիցից՝ 22 հոդված, Վեւտացոցից՝ 7, երկ-րորդ օրինացից՝ 25, Թվոցից՝ 1: Բացի այդ, Գոչը «Ղատաստա-նագրքի» նոր հոդվածներ կազ-մելիս երբեմն հիմնվել է այս կամ այն հոդվածի վրա: 11. «Հայկական կանոնագրքից», որում ընդգրկված էին առաջին երեք Տիեզերական ժողովների (Նիկիայի, Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի) կանոնները, ինչ-պես նաեւ Հայ եկեղեցու ժողով-ների եւ հայրերի կանոնական որոշումները, Գոչը փոխ է առել 90 հոդված հետեւյալ կանոննե-րից. Առաքելական՝ 3, Կլիմեն-տիսի՝ 12, Եկեղեցու հայրերի՝ 6, Նիկիայի՝ 5, Անկյուրաց՝ 4, Նեոկեսար՝ 9, Գանգր՝ 4, Անի-տոք՝ 4, Նիկիայի 2-րդ՝ 2, Լառ-դիկ՝ 1, Աֆանասի՝ 9, Վասիլի՝ 12, Գրիգոր Լուսավորչի՝ 1, Թադեոսի՝ 2, Շահապիվանի՝ 4, Դվինի 2-րդ՝ 3, ավելի ուշ՝ Պար-տավի՝ 3, Դվինի 5-րդ՝ 6 հոդված (այս տվյալները երախտագի-տությանը ստացել ենք բանա-սիրական գիտ. թեկն. է.Պիվա-

- գյանից): 12. Ընգծումը մերն է Կ. Մ.-Օ. 13. Հ.Է.Յի ì ì èùñëëë, è èçó+áí èþ èäöí ì èñë Èääëäçñëí è Àëäáí èë. «Èçä. Áí Àçäðä. ÑÑÐ», 1957, ì ì . 9, ñöð. 149-157. Հոդվածը մակերեսային է, փաստարկները համոզիչ չեն, պատմաբանասի-րական բնույթի լուրջ սխալնե-րով: Մենք վերադառնում ենք նրա փաստարկների քննու-թյանն առանձին աշխատու-թյունում՝ նվիրված «Աղվանքի պատմությանը»: 14. Õ.Öäð-Äðëäí öýí, ö., ñöð. 5-6. Ինչ կողմից ուղիղ փակագծերի մեջ առնված [Կիրակոսի ել]-ը պատահաբար է դուրս մնացել տեքստից, քանի որ քիչ վար նա խոսում է Կիրակոսի՝ որպես հայրենի Գանձակ քաղաքի մեծ հայրենասերի մասին: 15. Տարօրինակ է, որ C. J. S. Dowsett-ն էլ Դավիթ Գանձա-կեցուն համարում է David of Danjak՝ «ի քաղաքէն Գանձա-կայ»-ն շփոթելով «յաշխարհէն Գանձակայ»-ի հետ: 16. Մեծին Վարդանայ Պատմու-թիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159: Արեւելցի=Վար-դան Արեւելցի=Վարդան Մեծ: «Տիեզերական պատմություն». Հովհաննես Իմաստասերի մա-տնագրություններ, աշխատա-սիրություն Ա.Գ.Արքայախանի: 17. Ստեփանոս Օրբելյան, էջ 300-301: Լեո, Հայոց Պատմություն, Ի. 2-րդ, Երեւան, էջ 632, 633 եւ 637: 18. Կիրակոս Գանձակեցի, Պատմ. Հայոց աշխ. Կ. Մելիք-Օհանջա-նյանի առաջաբանով, Երեւան, էջ ԺԲ-XII: 19. Կիրակոս Գանձակեցի, էջ 175-176: 20. Սույն տեղում: 21. «Äðýí ñëëë Ñöäááí èë ì ðë-ðäðä Áí Ñä» ì äðäáí ä ä ñ äðäáí ääöí ýí ñëí äí A. A. ì äí ì -äýí ä, ääääëöëý, äñöí. ñöäöüý è ì ðëí ä+áí èý A. Ì. Äðöðí ýí ä, Äðäááí, 1954, ñöð. 4. Այլադա-վաններ ասելով՝ Գոչը նկատի ունի գլխավորապես մահմեդա-կաններին, որոնց կողմի քննա-դատությանն է նվիրված «Նե-րածության» IX գլուխը՝ սկսած այս խոսքերից: «քանզի մահ-մեդականները, թեպետ եւ ըն-դունում են այժմ հայր աստծուն, բայց նրա որդուն համարում են արարած՝ վիրավորելով այդ-պիսով եւ հորը» եւ այլն մինչեւ գլխի վերջը: Տե՛ս ì ðëðäð Áí Ñ, ðöññë. ì äðäá. A. ì äí ì äýí ä, ñöð. 25-27. 22. Սույն տեղում, էջ 4: 23. Հր. Աճառյան, Հայոց անձնա-նունների բառարան, հատ. Գ, էջ 336 եւ հտ. 24. Կիրակոս Գանձակեցի, էջ 116 – ռուս. թարգմ. էջ 63, Հմմտ. ì ðääëñëí äëä, ñöð. 6. 25. Èëðäëí Ì Äáí äçäëäöë, ñöð. 6. 26. Սույն տեղում, էջ 119: 27. Կիրակոս Գանձակեցի, էջ 9: Èëðäëí Ì Äáí äçäëäöë, ñöð. 15. 28. Վատ թարգմանություն է. ավելի լավ է՝ «աթռոյ ժառանգորդնե-րից»: 29. Èëðäëí Ì Äáí äçäëäöë, ñöð. 99. «Èñòí ðëëí -èëöäðäöðóí äý èí ì ðáí öëý Ç. Áóí èýòí ää», Բանբեր Հայաստանի արխիվների, 1968թ., N2, էջ 169-190: Թարգմանությունը ռուսերենից՝ բանասիրական գ.թ. Անահիպ Հարու-թյունյանի, «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության պատվերով:

